



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

355

Հ-92

# ՀՈՒՇԱՏԵՏՐ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐԻ ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 1



ԽՍՀՄ. Պրոֆեսորների, բոլոր յերկրների, միացե՛ք. ՀՍԽՀ

355  
2-99

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

| ԽՁ. | ՏՈՂ.       | ՏՊՎԱՄ Ե                                   | ՊԵՏՔ Ե ԿԱՐԻԱԼ                                |
|-----|------------|-------------------------------------------|----------------------------------------------|
| 8   | 4 ներ.     | գյուներով                                 | գյուներով                                    |
| 18  | 18-14 վեր. | առարկաների                                | առարկաների                                   |
| »   | 4 ներ.     | յերկարությամբ                             | զմի յերկարությամբ                            |
| 18  | 1 վեր.     | հանճային                                  | հանճային                                     |
| 19  | 18 վեր.    | (սրստո)                                   | (սրստոկ)                                     |
| 32  | 2 ներ.     | չմա                                       | չմա                                          |
| 35  | 3 վեր.     | առարկաների                                | առարկաների                                   |
| 37  | 10 վեր.    | վարդիլիամպեր-                             | վարդիլիամպերմա-                              |
|     |            | մեարով                                    | բով                                          |
| »   | 6 ներ.     | 10.000 սմ.                                | 10.000 հմ.                                   |
| 40  | 5 վեր.     | տղերը                                     | տղերը                                        |
| 43  | 1 վեր.     | 122                                       | 22                                           |
| 48  | 14 վեր.    | 1 <sup>1</sup> / <sub>2</sub> -ի կիլոմետր | 1 <sup>1</sup> / <sub>2</sub> -ից 1 կիլոմետր |
| 48  | 2 ներ.     | (զորամասը)                                | (զորամասը)                                   |
| 53  | 12 ներ.    | դրությանն                                 | դրությանն                                    |
| »   | 13 ներ.    | սեղի                                      | սեղի                                         |
| 57  | 8 վեր.     | ժամանակ                                   | ժամանակը                                     |
| 60  | 18 ներ.    | (չեֆերի                                   | (չեֆերի—                                     |
| 63  | 15 վեր.    | պիլինդատորական                            | պիլինդատորական—                              |
| 64  | 1 ներ.     | հետադրություն                             | հետադրություն                                |
| 66  | 4 ներ.     | նշանակում են                              | նշանակում են                                 |
| 68  | 12 վեր.    | 500—100                                   | 500—1000                                     |

1290

Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Կ Ա Պ Ի Մ Ա Ս Ի Ն

ԿԱՊԻ ԶՈՐԲԵՐԻ ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԱՑԻՆԻ ՀԱՄԱՐ

Հ. Հ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



17. JUN 2013

ИНСПЕКЦИЯ СВЯЗИ РККА

Памятка

ПО СВЯЗИ ДЛЯ КРАСНО-АРМЕЙЦА ВОЙСКА  
СВЯЗИ

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ  
ԳԼԱՎԻՏ 6775 (Բ)  
ՊԱՏՎԵՐ № 4209  
ՏԻՐԱԺ 1500

10335-57

1. ԿԱՊԸ ԶՈՐԳԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Ե.

1. Առաջ լավ կապի չկա դեկավարություն: Առանձնապես դժվար է դեկավարել զորքերին մարտական պարագայում, վորտեղ կապն է, վոր հատուկ նշանակություն է ստանում: Միանգամայն պարզ է, վոր յուրաքանչյուր պետ և յուրաքանչյուր շտաբ կարող է դեկավարել միայն այն դեպքում, յերբ նա ունի իր ձեռքում լավ կարգավորված կապ:

2. Յեթե կապը լավ հիմքերի վրա չի դրված վոչ մի ապերաջիա չի կարելի հաջողությամբ ավարտել, իսկ ամեն մի անհաջող ապերաջիա պատճառ է դառնում միանգամայն ավելորդ և անհարկավոր կորուստների:

3. Ամբողջ կապից և յուրաքանչյուր կապավորից առանձին պահանջվում է՝ ա) ժամանակին և ճշտորեն տեղ հասցնել կարգադրությունները, պատվերները և տեղեկագրերը, բ) միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կապն աշխատի առանց ընդհատումի: գ) կապի միջոցներից վորեւե մեկը վնասվելու դեպքում պետք է ողտադորձել բոլոր միջոցները՝ ամենակարճ ժամանակում վերականգնելու կտրված կապը: դ) հաստատ կերպով իմանալ կապի այն միջոցների տեխնիկական և տակտիկական առանձնահատկությունները, վորոնք կլինեն մատակարարման մեծ փոքր հարավորություն կտա լավագույն միջոցադրություն: Վապի միջոցները և անհրաժեշտ վորոնքները, յուրաքանչյուր հարմարե-





ցնելով, հատկապես կիրառել այն միջոցները, վորոնք ավելի համապատասխան են տվյալ պարագայի պայմաններին. ե) խստորեն պահպանել ռազմական զաղտոնիքը և չտարածել այն բոլորը, ինչ կարող է խմանալ կապավորը իր զորքերի զործողութիւնների մասին:

4. Կապի միջոցները լավ գործադրելու և ոգտագործելու համար անհրաժեշտ է ունենալ լավ պատրաստութիւն:

5. Նկատի ունենալով ուսուցման կարճատե ժամանակը և ծրագրի խոշոր ծավալը, լավ կարելի չէ պատրաստվել այն ժամանակ, յերբ կարմիր բանակայիններից յուրաքանչյուրը պարզորեն կպատկերացնի կապի ծառայութեան հատուկ կարեւորութիւնը և կզգա այն բարձր պատասխանատվութիւնը, վորը պիտի կրի կապավորը ռազմական զործողութիւնների ժամանակ:

6. Ամեն մի ռազմիկ-կապավոր ամենից առաջ պետք է լավ պատրաստված լինի ընդհանուր-ռազմական տեսակետից և դրա հետ միասին պետք է ֆիզիկական առողջ լինի: Յեթե կապավորը չի անցել ֆիզիքական պատրաստութիւնը, նա չի կարող լավ կատարել իր աշխատանքը մարտական պարագայում, վորտեղ պահանջվում է ղեմացկունութիւն, ֆիզիքական առողջութիւն, հարստութիւն, համարձակութիւն, յեռանդ և սեփական նախաձեռնութեան հայտարարում: Այս բոլորը կարելի չէ ձեռք բերել միայն լավագույն ձևով զորամասում ֆիզիքական պատրաստութիւնն անցնելուց հետո: Բացի դրանից, յուրաքանչյուր կապավոր քաղաքականապես այնքան զարգացած պետք է լինի, վոր կարողանա ազատորեն քննարկել բոլոր տեղի ունե-

ցող իրադարձութիւնները և լիակատար դիտակցութեամբ վերաբերվել դեպի իր պարտականութիւնները:

## 2. ԿԱՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔԸ.

7. Վորպես ընդհանուր կանոն, բոլոր դեպքերում կապը սահմանվում է աջից ձախ և վերից վար, այսինքն՝ ավազից դեպի կրտսերը. սակայն այս կանոնը ազատութիւն չի տալիս կրտսերին, վոր ավազի հետ կապի բացակայութեան դեպքում, իր կողմից միջոցներ ձեռք չառնի կապը վերականգնելու համար:

Յերբ միատեղ զործում են հետեակն ու հրետանին, հետեակի հետ կապ է պահում հրետանին:

Յերբ միատեղ զործում են հետեակն ու հեծելազորը, հետեակի հետ կապ է պահում հեծելազորը:

## 3. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

8. Կարմիր բանակի կապի միջոցներն են ա) լարային հեռագրի ու հեռախօսի հեռադրական ու հեռախօսային ապարատները, բ) Ռադիո հեռագրի ու հեռախօսի ընդունիչներն ու փոխանցիչները. գ) ռազմա-փոստային միջոցները (սովառնակ, մոտոցիկլ, բոլոր տեսակի թուղթիկ փոստերը, վոտավոր և ձիավոր լրատարները, խզավներ, շունը), ի) լուսազգանշանային ապարատներն ու միջոցները (արևադիր-գելիո-զրաֆ, ազդանշանային լամպներ, լապտերներ, հրթիռներ, ազդանշանային փամփուշտներ, ծխային ադանդաններ, խորույկներ). ե) ձայնական նշանադրու-



թիւն ապարատներն ու գործիքները (սուլիչ, ճայնա-  
փող-ռուպոր) :

9. Վերոհիշյալ միջոցներից ամեն մեկն ունի իր  
բնութագիրը (առանձնահատկութիւնը), վորին հա-  
մապատասխան եւ գործադրւում ե այդ միջոցը : Այդ ա-  
ռանձնահատկութիւններն են՝

ա) Լարային հեռագրեր, վորը կապի ամենագոր-  
ծածական միջոցն է : Ինքնըստինքյան հեռագիրը չունի  
չափ թերութիւններ և յիովին ապահովում ե փոխանց-  
ման անփտանգութիւնը, հուսալիութիւնը, արագու-  
թիւնն ու վստահելիութիւնը, անկախ նրանից թե ինչ  
յեղանակ ե և տեղանքը ինչ հատկութիւններ ունի :  
Նրա թերութիւնը՝ նյութեղէն մասի մեծածաւալու-  
թիւնն ե, անհրաժեշտ ե դժեւ կառուցել և հնարավոր  
ե միացումը հակառակորդի կողմից :

բ) Լարային հեռախոս, վորը գործածութիւն  
տեսակետից հեռագրից հետո կապի ամենագործածա-  
կան միջոցն է : Շահագործման տեսակետից իրենից ա-  
ռանձին դժվարութիւններ չի ներկայացնում : Անմի-  
ջորեն կարելի յե իրար հետ կապվել : Թերութիւնները  
նրանք են, վոր հեռախոսային ապարատների լարերը,  
վորոնք զգված են առաջավոր շերտերում, կարող են  
կտրվել արկերի ընկնելուց կամ կարող են վնասվել իր  
ղործերի անուշադրութիւն շնորհիւ : Հնարավոր ե բռն-  
նել և ընդունել հեռախոսային խոսակցութիւնները ու-  
ղիտ-հեռագրի ապարատների ողնութիւնը, վորոնք  
տրված են լինում 3—4 կիլոմետր հեռախոսագծից հե-  
տո :

գ) Ռադիո—հեռագիր (հեռախոս), վորն ունի  
մեծ առավելութիւն հանդեպ լարայինի, վորովհետեւ

լարեր զցելու անհրաժեշտութիւն չի լինում, մի բան,  
վոր նրան չարժուէ և դարձնում : Վորոչ չափով կախված  
ե միջնորոտային ազդեցութիւններից, հնարավոր ե  
ծածուկ բռնել և մատնել իր կանգնած տեղը, վորի պատ-  
ճառով հարկ ե լինում ծածկազրել բոլոր տեղեկութիւն-  
ները և մի շարք միջոցներ ձեռք առնել քողարկելու հա-  
մար : Բացի դրանից, ռադիո—հեռագրի ու հեռախոսի աչ-  
խատանքը խիստ կարգապահութիւնն ե պահանջում :  
Ռադիո—հեռախոսը նույն հատկութիւններով ե ոժտը-  
ված, ինչ վոր հեռագիրը, սակայն այդ հատկութիւն-  
ների հետ միասին ունի նա բարդ նյութական մաս և  
պահանջում ե իրեն հետ վարվելու համար լավ պատ-  
րաստված աշխատող կայարանում :

դ) Թռուցիկ փոստ բոլոր տեսակի (մատոցիկ, հե-  
ծանիւ և այլն), վորը պահանջում ե լավ ճանապարհներ  
և միայն այդ պայմաններում կարող ե կապի հուսալի  
միջոց լինել : Վատ ճանապարհները, աննպաստ յեղա-  
նակը դանդաղեցնում են նրա արագութիւնը, հարկ ե  
լինում միջնական պոստեր դնել, մի բան, վոր պատճառ  
ե դառնում մարդկանց չափ ծախսելուն :

ե) Աղավնի—ունի տեղ հասցնելու արագութիւն  
և հուսալիութիւն (97 տոկոսով աղավնիները վերա-  
դառնաւ են իրենց աղալնատունը) : Թռիչքի արագու-  
թիւնը կախված ե նրա տեսակի առանձնահատկութիւ-  
նից և քամուց : Թռիչքի մաքսիմալ արագութիւնն ե՝  
մի կիլոմետրը մեկ րոպեյում : Լավ վարժեցրած աղալ-  
նին կարող ե թռչել 400—500 կիլոմետր : Ութեղ քամին,  
ձյունը, մառախուղը դժվարացնում են աղալնիների ուղ-  
տագործումը : Շարժական աղալնատները պահանջում



են ինչ ամէլի քան 6 Ժամ՝ աղայինուն նոր դատաւորական  
տեղում վարժեցնելու համար: Աղայինատան և շտաբ  
միջև կապ պահելու համար պահանջվում և հեռախոս  
կամ թուղթիկ փոստ:

դ) Շուրջ կարող և դործել միայն այն դեպքում  
յերբ լավ վարժեցված և նա և խտտագույն կարգապահող  
թյունը կապել և նրան շնավարժին: Մյուս զորամասերը  
կարմիր բանակայիններին քնքուշ վերաբերմունքը շան  
անսկսեալ և դարձնում: Պահանջվում և վարժեցման խիստ  
մեթոդ, 3-ից մինչև 6 ամիս: Վազել անցնելու համար  
անհրաժեշտ և ունենալ պոստեր 5—6 կիլոմետր տարա-  
ծության վրա:

ը) Լուսային հեռագիր (արևադիր, աղբանշա-  
նային լամպաներ, լապտերներ), վորոնց դործածու-  
թյունը կախված և յեղանակից: Չափազանց դանդաղ  
և փոխանցում, պահանջում և բաց կամ ալիքաձև տե-  
ղանք: Սուրբ առաքելություն ունի, յերբ դործում և կապ  
պահելու համար—հեռախոս, ռադիո, ամտոմորիլ,  
ռուսաստաններում և լեռնային ռալոններում: Նյութ-  
թական մասը մեծածալալ չե և արագ կարելի յե հա-  
տառել տեղում (3—4 րոպե) . մի հանգամանք, վորը  
առանձնապէս ոգուտ և տալիս յերթական շարժումներ  
ժամանակ:

թ) Հրքիւնները, աղբանշանային փաւփուշունե-  
րը, ծխագլանները դորքերը դործադրում են բա-  
ցառապէս վորպէս պալմանական աղբանշաններ: Կախ-  
ված են յեղանակից (մտտախուզ, ձյուն, անձրև),  
դյուններով դժվար և տարբերել, հեշտ դիտելի յեն ի-  
րենց ձևերով (աստղաձև, թրթրաձև, և այլն): Ունեն  
դիտողության վերջնական հեռավորություններ (տա-  
րածություններ):

ժ) Չայնական նշանարարութիւն—պլխավորապէս  
դործադրվում և վորպէս նախադրուչացման միջոց  
թունավոր նյութեր յերեւալու դեպքում, կարելի  
յե միայն պալմանական աղբանշաններ տալ, կախված  
և յեղանակից ու տեղանքից: Կապի դորքերը կիրառում  
վորպէս հրամաններ տալու միջոց:

#### 4. ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

10. Կորպուսում՝ դիվիզիաների և հարևան կու-  
պուտի շտաբի հետ կապ պահելու համար,—հեռագիր,  
հեռախոս, ռադիո և այլն, նալած ինչ պարագա դո-  
թյունը կախված և յեղանակից: Չափազանց դանդաղ  
մտտոցիկլ, հեծանիւլ, աղայիններ և թուղթիկ փոստ:

11. Դիվիզիայում՝ դնդերի և հարևանների հետ  
մտտոցիկլ, հեծանիւլ, աղբանշանային լամպաներ, ա-  
թական մասը մեծածալալ չե և արագ կարելի յե հա-  
տառել տեղում (3—4 րոպե) . մի հանգամանք, վորը  
առանձնապէս ոգուտ և տալիս յերթական շարժումներ  
ժամանակ:

12. Գնդում՝ դումարտակների հետ կապ պահելու  
համար—հեռախոս, ռադիո, պիրոտեխնիկական նշա-  
նարարութիւն, փոստային աղայիններ, շներ, հեծա-  
նիւլ, ձիավոր և վոտավոր լրատարներ:

13. Գումարտակում՝ վաշտերի հետ կապ պահելու  
համար—հեռախոս, ռադիո, լուսային, ձայնական  
և պիրոտեխնիկական նշանարարութիւն (պալթուններ,  
ձիեր), կենդանի կապ (ձիավոր և վոտավոր լրատար-  
ներ) և շներ:

14. Վաշտում՝ վաշտի հրամարտարի ու գնաւ-



ների հրամատարների միջև կապ պահելու համար— հեռախոս, լուսային նշանարարություն, ձայնական նշանարարություն (սուլիչ, ազդարար, փողակ), պիրոտեխնիկական նշանարարություն, լրատարներ (վաղաններ) և չներ:

Ծանոթություն: Վաշտում կապի այս կամ այն միջոցի կիրառումը կախված է պարագայից, որինակ՝ պաշտպանություն կամ անշարժ պահպանություն ժամանակ լայնորեն պետք է կիրառել հեռախոսային միջոցները: Հարձակման ժամանակ, հեռախոսային կապը կտրվելու դեպքում և յերբ հնարավոր չէ այդպիսի կապը վերականգնել—ամենից ավելի դործադրելի միջոցները կլինեն՝ ձայնական, լուսային կապը, լրատարները և չները: Վաշտի հրամատարի և հարևանների ու հրետանու միջև (այն հրետանու, վորը դործում է վաշտի ուսուցում անշարժ պահպանություն մեջ) և պաշտպանության ժամանակ, —այս բոլոր դեպքերում, ստավեկայես պետք է դործադրել հեռախոսային կապը. դժվար կլինի հեռախոսային կապ պահպանել հարևանների հետ հարձակման ժամանակ:

Յերբ հարևանների հետ հեռախոսային կապ և հաստատում, բոլոր դեպքերում, յերբ այդ կապը համարյա ճակատի դժին զուգահեռ և անցնում, անալոգիան պետք է սահմանել յերկարային կապ՝ հակառակորդի կողմից ծածուկ լուրուց խուսափելու համար:

15. Դասակում՝ դասակի հրամատարի ու ջոկերի հրամատարների և հարևանների միջև կապ ու

հելու համար—լուսային, ձայնական և պիրոտեխնիկական նշանարարություն, վոտավոր լրատարներ և չներ:

16. Զովում՝ ջոկի հրամատարի և հրաձիգների միջև կապ պահելու համար—ձայնով, ուսպոր, սուլիչ և հասարակ պայմանական նշանարարություն:

17. Հրամատարը կամ պետը մարտում իր զորամասը (ստորաբաժանումը) ղեկավարում է իր հրամատարական կետից: Հրամատարական կետը պետք է ընտրել այնտեղ, վորտեղից հարմար է ղեկավարել և դիտել մարտադաշտը. նա բաղկացած է՝

ա) հրամատարական դիտակետից,

բ) շտաբի համար ծածկված տեղից և

գ) կապի կետից (կապի կենտրոնական կայարան):

Հրամատարական կետից կապ է հաստատվում բոլոր մարտական տեղամասերի հետ (ներանց հրամատարների հետ), հարևանների հետ և թիկունքի հետ: Կապը հրամատարական կետում պետք է պատրաստ լինի մինչև հրամատարի (պետի) գալը:

Հրամատարական կետի դասավորումն ու ամբողջ սարքավորումը պետք է խնամքով քննարկված լինեն:

## 5. ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԿԱՐԵԼ ՅԵՎ ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԿՈՃ

18. Դաշտային հեռախոսային կարելը կազմված է յերեք մասից. ջիղից, մեկուսացումից և պարուրից (ОП-летка): Ամենից շատ հայթայթման մեջ է գտնվում յոթջիղյան հեռախոսային կաբելը: Դաշտային հեռախոսային կաբելը կոճի վրա յեն փաթաթում  $\frac{3}{4}$  և 1



վերստ յերկարության, նալած կարելը ինչ տրամադրի  
և ինչ ծանրություն ունի:

19. Կան աշխարհի կոճեր, վորոնք ունեն հարմարանքներ դնալիս խոսակցության համար և կան առանց աշխարհի հարմարության:

Կարելը յետ տալու համար յուրաքանչյուր կոճ կազմված է՝ ա) հիմնական հաստոցից, բ) կարելը յետ տալու համար քմբուկից և գ) քմբուկը պտույտ տալու համար հարմարանքից:

Կոճի հիմնական հաստոցը կազմված է յերկու կտուր ունենալով ուղղանկյունի հիմքերից: Այդ հիմքերը պլանագրած են իրար հետ չորս հիմնական խողովակաձև շերտերով և մեկ հինգերորդ շերտով՝ կարելին ուղղություն տալու համար՝ կարելը յետ կծկելու յետ տալու ժամանակ: Շերտերի կոճի հիմքերին մի կողմից բոլորովին պնդացրած է մյուս կողմից՝ մանեկներին ուղնությամբ: Հիմքերի ներքի միջին մասում կան սոնալայններ թմբուկի սոնալներն ազատ պտտելու համար:

Կարելը կծկելու և յետ տալու (յետ կծկելու) համար թմբուկը կազմված է փայտե հղանից (գլանից), վորի ծայրերին ամրացրած են յերկաթյա ձողիկներ, վորոնք հնարավորություն են տալիս սոնուն պտույտ տալ թմբուկը:

Թմբուկի սլոտվելու հարմարանքը կազմված է՝ ա) բանեցնող անվակից (шестерня), բ) ատամնավոր անվակից, գ) փողաձև տուփից և դ) պտույտ տալու համար կոթից:

20. Կռքը գործի դնելու համար անհրաժեշտ է սեղ-

մեկ կոթին թմբուկի սոնակի ուղղությամբ և չուռ տալ նրան դեպի հիմքը ուղիղ անկյունով:

Կոճը քանդելու համար պետք է յետպատուակել ձողիկներին մանեկները, բաժանել կողը կոթի հետ և դուրս հանել թմբուկը: Քանդելու կարիք կլինի այն ժամանակ յերբ կեղտոտվում է ատամնավոր փոխանցիկը կամ յերբ կարելը դուրս է ընկնում թմբուկի բոլորակի (չբջանի) և կողի միջև: Կոճը քանդելու համար կա բանալի:

## 6. ԿԱՐԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱ- ԽՈՍԱՅԻՆ ԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

21. Դաշտային հեռախոսային կաբելային գիծ և հեռախոսային կայարաններ կառուցելու համար բոլոր անհրաժեշտ գործիքներն ու պատկանելիքները (պարագաները) տեղավորվում են կաշվե հեռախոսային պայուսակի մեջ. 1) տախապուռնկ, 2) սրապուռնկ, 3) յերկու դանակ, 4) գայլիկոնիկ, 5) հեռախոսային կոճը քանդելու բանալի, 6) ռեդինապատ և ռեդինե ժապավենի բոլորակներ, 7) սենյակի հաղորդիչ, 8) կտավ (լաթ) ապարատները սրբելու համար, 9) արույրե լար միացումներին համար, 10)  $\frac{1}{4}$  դրվանքա ռեդինե լուծույթ թիթեղյա ամանով, 11) յերկաթե ձող հողանցումի համար, 12) ծրար բլանկներով հեռախոսագրերի համար և 13) արկղ դրենական պիտույքներով:

## 7. ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԼԱՐԱՅԻՆ ԳԻԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

22. Դաշտային հեռախոսային գիծը կառուցում են մի լարանի կամ յերկլար: Մի լարանի գիծ կառուցելու դեպքում կայարանների միջև մի գիծ են գցում, վորի



ծայրերը կայարաններում միացվում են հեռախոսների զծային սեղմիչներին, իսկ յերկրորդ զծային սեղմիչները մացվում են հողանցումի հետ հաղորդիչներով:

Յերկար գիծ զծելու դեպքում կայարանների միջև անց են կացնում յերկջիղ կարել կամ յերկու առանձին գիծ, վորոնց ծայրերը կայարաններում միացվում են յերկու սեղմիչներին (գիծը և հողը): Մի լարանի գծով խոսակցությունները կարելի յե բռնել՝ ելեքտրական տոկը (հոսը) հողի մեջ տարածվելու պատճառով:

23. Դաշտային հեռախոսային գիծ են պցում հեռախոսային խմբերը (կոմանդաները): Յուրաքանչյուր խումբ լրիվ բանվորների թվով բաղկացած է 7 մարդուց.—1 ջուղի հրամատար կամ վերակացու և 6 հեռախոսիչներ (զծային բանվորներ), բանվորների կըրճատ թվով խումբը բաղկացած է 4 մարդուց.—1 վերակացու և 3 հեռախոսիչ: Յեթե վերակացուներ չկան հեռախոսիչներն են աշխատանքը կատարում ինքնուրույն կերպով, միայն նրանցից մեկը նշանակվում է ավագ: Նայած գիծ կառուցելու հեռավորությանը, խմբին տրվում է մեկ կամ յերկու հեռախոսային յերկանիվ, վորոնցից յուրաքանչյուրն ունենում է 7—8 վերստ յերկարության կարել կծկած կոճերի վրա: Ամեն մի խումբը աշխատանքը կատարում է ինքնուրույն կերպով: Յերկար գծեր կառուցելու դեպքում, առաջուց նշանակված կետերն են ուղարկում խմբեր և նշանակված ժամանակին նրանք իրար դիմաց են դուրս գալիս գիծը պցելով, իսկ յեթե հնարավոր չե դեպի առաջ նախորդ խմբեր ուղարկել, այն ժամանակ խմբերից յուրաքանչյուրն աշ-

խատանքը կատարում է ինքնուրույն մեկը մյուսի հետևելից: Յեթե հնարավորություն կա նախորդ գննվում է այն տեղանքը, վորտեղ պետք է գիծ պցելու աշխատանքը տարվի: Դաշտային հեռախոսային լարային գիծ պցելու արագությունը հաշվում է լրիվ բանվորների թվով խմբի համար մինչև 5 կիլոմետր (4—5 վերստ) մի ժամում. բանվորների կըրճատ թվով—3—4 Վիլու-մետրը մի ժամում:

24. Նախքան աշխատանքի դուրս գալը, խումբը չարվում հաշվում է համարներով մեկից մինչև վեց: Վերակացուի «վերցնել գործիչները» հրամանով, վերակացուն վերցնում է հեռախոսը, 1ին և 2-րդ համարները վերցնում են կարելով կոճերը, 3-րդ համարը վերցնում է հեռախոսային սլաշուսակը, 4-րդ համարը—կարելը պցելու կետը, 5-րդ համարը—կացինը և 6-րդ համարը ֆոնիկական հեռախոսը և յերկաթյա ձողը հաղորդչով հողանցումի համար: Վերակացուի յերկրորդ «անցիլը աշխատանքի» հրամանով, բոլորն անցնում են աշխատանքի: 1-ին համարը կարելի ծայրը տալիս է հեռախոսային կայարանին, վորտեղից սկսվում է գծի պցումը. աշտեղ բանվոր հեռախոսիչ 6-րդ համարը միացնում է կարելի ծայրը հեռախոսի սեղմիչներից մեկին, իսկ մյուս սեղմիչը միացնում է հողի հետ: Յերկարային գիծ յեղած դեպքում կարելի յերկու ծայրերը միացվում են յերկու սեղմիչներին: 6-րդ համարը աշխատանքի ժամանակ մնում է հեռախոսի մոտ, սլաշուսանում է գծից կանչերին՝ սուտգելու համար, իսկ առաջին բանվորը, կարելի ծայրը տալով, արագ քայլերով գնում է վերակացուի ցուց տված ուղղությամբ: 2-րդ համար բանվորը յերկջիղ գիծ պցելու դեպքում



նույնն և կատարում, ինչպիսիք 1-ին համարը, իսկ մի բա-  
րանի գլիժ գցելու դեպքում 2-րդ համարը աշխատանքը  
փոխում է 1-ին համարի հետ:

3-րդ համար բանվորը գնում է սոսնձից գնացող  
1-ին և 2-րդ համարների յետևից 3-5 քայլի վրա,  
դնում է յետ կծկվող կարելը մի բարանի գլիժ գցելու  
դեպքում, և յերբ միաջիղ կարել է, յերկու կարելը  
փաթաթում է իրար հետ և տեղ-տեղ կապում թելով:  
սգնում է վերակացուին ստուգելու գլիժ գցած տեղա-  
մասը, իրար հետ միացնում և յետ կծկած կոճերի կա-  
րելներին ծայրերը իրար հետ: 4-րդ և 5-րդ համարները  
գնում են 3-րդ համարի յետևից 3-5 քայլի վրա, ճան-  
կի ողնությամբ գցում են կարելը տեղական ստարկա-  
ներին կամ, յեթև անհրաժեշտ է, կախում են ձողերի  
վրա:

25 Զոկի հրամատարը կամ վերակացուն ղեկա-  
վարում է աշխատանքը, ցույց է տալիս թե ինչ ուղղու-  
թյամբ պետք է տանել գլիժը, ցույց է տալիս արդելքների  
վրայով գլիժն անցկացնելու ձևերը: Հետևում է աշխա-  
տանքի ճշտությանը և գլիժ գցելու տեխնիկական սյու-  
մանները պահպանելուն: Կոճերը, յերբ յետ են կծկում  
վերջացնում, ստուգում են գլիժ գցած տեղամասը, հե-  
ռախոտով կանչում են սկզբնական կալարանին, իսկ աշ-  
խատանքի ժամանակ կարելը վնասվելու դեպքում վո-  
րոնում են վնասված տեղը և ուղղում են:

26. Սալյապանը յերկանիվի հետ գնում է գցվող  
յերկարությամբ, վորքան հնարավոր է աշխատող խմ-  
բին մոտիկ

Ծանոթություն: Մոտավորապես նույն կարգով  
և կատարվում է գալտային հեռադրային գլիժ գցե-  
լու աշխատանքը:

## 8. ԳԻԾ ԳՅԵԼԸ ԲԱՅ ՏԵՂԱՆՔՈՒՄ

27. Բաց տեղանքում կարելը գցվում է ուղղակի  
դեմին վրա: Ճանապարհի յերկարությամբ գլիժ գցելու  
ժամանակ, ճանապարհով չարժվող դորքերի ու գումակ-  
ների կողմից պատահական վնասվածքներից զերծ պա-  
հելու համար, գլիժը անհրաժեշտ և ճանապարհից մի  
կողմը տանել:

Յեթև գլիժ գցելու ուղղության վրա կան տեղական  
ստարկաներ, ինչպես որինակ՝ ծառեր, ցանկապատեր,  
դալար ցանկեր, այն ժամանակ պետք է կարելը գցել  
դրանց վրա: Ճանապարհների անցարաններով անցկաց-  
նելիս, կարելը անպայման պետք է բարձր լինի վոչ պա-  
կա 3 1/2 մետր (4 1/2 արշին): Սահել ընկնելու առաջն  
առնելու համար տեղական ստարկաների վրա կարելը  
պետք է սնդապնել սահել 50 մետրի վրա (70-80 քայլի  
վրա): Ծառերի ճյուղերին և ձողերին կարելը պետք է  
ամրացնել մերքով (փաթ քցելով), մեխերով և յերկա-  
թյա իրերով՝ կարելի մեկուսացումը փչացնելուց ազատ  
պահելու համար: Հեռադրայունները կարելի և ողտա-  
դործել կարելը կախելու համար, սակայն չի կարելի  
կարելը գցել մեկուսիքների վրայով և դիպչել հեռա-  
դրական լարերին: կարելի յե կարելը փաթաթել սյունին  
կամ թելով կախել սյունից խիժ մեխերի վրա:

## 9. ԳԻԾ ԳՅԵԼԸ ԿՏՐՏՈՒԿ ՏԵՂԱՆՔՈՒՄ

28. Զորակի և սորսարների (ռիսվինա) մեջով կա-  
րելն անցկացնելիս, պետք է ամրացնել վերևի ծայրից  
կամ լանջի մոտ ներքևում, վորի համար կարելը ողով  
կապում են բլրի վրա կապելով խիժով են դեմին  
մեջ:





Ճանձային տեղանքում կարելի պետք է կախել ձու-  
ղերից (վորոնք տնկվում են դեռնի մեջ), թփերից և,  
միայն ծայրահեղ դեպքում, կարելի չե անցկացնել  
ազդակի հողակույտերի վրայով:

Անտառում կարելի կախում են ծառերից 2 մետրից  
վոչ պակաս բարձրութեան վրա (մոտ 3 արշին բարձ-  
րութեան վրա), իսկ լարեր անցկացնելու դեպքում—  
ծխավորի բարձրութեամբ (մոտ 4 արշին):

## 10. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ՅԵՎ ԳԵՏԵՐՈՎ ԳԾԵՐ ԱՆՅԿԱՅՆԵԼԸ

29. Ճանապարհի անցարահի վրայով կարելի անց-  
կացնելիս, պետք է բարձրացնել ճանապարհից բարձր՝  
յերկաթուղու համար 6 մետրից վոչ ցածր (մոտ 9 ար-  
շին), իսկ սովորական ճանապարհով անցկացնելիս՝ 4  
մետրից վոչ ցածր (մոտ 6 արշին):

Յեթե չկան տեղական առարկաներ կարելի կախելու  
համար, այն ժամանակ ձողեր են տնկում: Յեթե ան-  
ցարանի մոտիկում կամուրջ կա, պետք է ողավիկ դրա-  
նից և կարելի անցկացնել կամուրջի տակով (վաղածքի  
տակով՝ կամուրջի յեղրով) կամ ամրացնել կարելի կա-  
մուրջի արտաքին կողմի ճաղերից:

Յերկաթուղադիժր կարելի անցնելու ժամանակ,  
կարելի ծայրը կարելի չե անցկացնել ուղիների տակ և  
պնդացնել այն ճանապարհի կողմնակներին:

30. Յեթե կարելի գիծն անցկացնելու ուղղու-  
թյան վրա գետ է պատահում և մոտեցում չկա կա-  
մուրջ, այն ժամանակ, դեռի մինչև 150 մետր (մինչև  
70 սաժ.) լայնութեան դեպքում, կարելի կարելի չե կա-  
խել սյուներից կամ ձողերից, վորոնք ամուր տնկված

են լինում դեռի յերկու կողմում: Իսկ յեթե դետը լայն  
է կամ նավարկելի, այն ժամանակ, հարկ է լինում  
կարելի անցկացնել դեռի հատակով, վորի համար ան-  
հրաժեշտ է նախորոք պահանջել ամենից ավելի հուսալի  
և ամուր կարելի (մեկուսացման տեսակետից),—գետա-  
յին դրահապատ, սապյորական հագորդիչ (պայթու-  
ցիկ) կամ ծանր դաշտային հեռադրական, և, միայն  
ծայրահեղ դեպքում, կարելի չե անցկացնել դաշտային  
թեթևացրած հեռադրական կարելի: Նախքան անցկաց-  
նելը պետք է կարելի պատրաստել ամենաքիչը դետի  
յերկու լայնութեան չափ: Կարելի սարքին մեկուսացում  
պիտի ունենա, ըստ հնարավորութեան, առանց միա-  
ցումների (սրոստո). իսկ յեթե հարկավոր է միացում-  
ներ անել, ապա այդ միացումները պետք է մեծ խնամ-  
քով կատարել: Պատրաստած կարելի պետք է ստուգել,  
թե վորքան նա անվնաս է և մեկուսացումը սարքին:  
Կարելի սկզբնական ծայրը տեղավորում են խրամի մեջ  
(կանավկա)  $\frac{1}{3}$  մետր խորութեամբ (մոտ  $\frac{1}{2}$  արշին),  
ամրացնում են այն ութի ձևով ցցերի չուլջը, տնկած  
հողի մեջ, և խրամը լցնում են հողով:

31. Կարելի կոմը տեղավորում են նավակի յետե-  
վի մասում այնպես, վոր աղատ կարողանա պտտվել  
առանցքի առնակաքների վրա: Նավակը անցնելու ժա-  
մանակ ուղղում են դեպի հոսանքը, այնպես, վոր ըստ  
հնարավորութեան կանգնի գիծ գծելու սկզբի տեղի դի-  
մաց: Նավակն անցնելու ժամանակ մի բանվորը յետ է  
կծկում կոճից կարելի, իսկ մյուսը ընկղմում է այն  
ջրի մեջ թուլացնելով: Յեթե դետի հոսանքը արագ է և  
հատակը քարքարոտ, այն ժամանակ գիծը անցկացնելիս  
կարելի թելով կապում են բոունցքի մեծութեան քարեր



մի քանի սաժեն հեռավորութիւն վրա: Վորպեսպի գիծ  
դրելը արագ կատարվի, առաջից պետք է քարերը կա-  
պել թելով և պատրաստել ավում յեղած ժամանակ՝  
յուզգ-զույգ թելի ծայրերին. աշխատանքի ժամանակ  
հատուկ նշանակված բանվորը արագորեն փաթաթում է  
քարերով թելի կտորը նախքան ջրի մեջ ընկնելը:

Մյուս ավին անցնելուց հետո կարելի ծայրը՝ ամ-  
րացնում են ավում այնպես ինչպես սկզբնական ավում:

## 11. ԳԾԵՐ ԱՆՅԿԱՑՆԵԼԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

32. Բնակավայրերում գիծ անցկացնելու համար ըն-  
տրում են այնպիսի փողոցներ, վտրտեղ շարժումն ավելի  
քիչ է. կարելի կախում են ցանկապատերին, կտուրների  
յեզրերին, շինություններին—առաջին հարկի լուսամուս-  
ներից վերև: Կարելի պետք է ամրացնել յուրաքանչյուր  
20-30 մետրի վրա, այնպես, վոր 3 մետրից ցած կախ  
չընկնի, իսկ փողոցներով կտրել անցնելու ժամանակ  
և այնպիսի տեղերով, վտրտեղ բարձր բարձած սայլեր  
և ավտոմոբիլներ են անցնում կարելի չորս մետրից  
ցած չպիտի լինի:

## 12. ԳԻԾ ԱՆՅԿԱՑՆԵԼԸ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ

33. Գիծ անցկացնել գիշերն ավելի դժվար է քան  
ցերեկը, մանավանդ յնր տեղն անձանթի է. այդ պատ-  
ճառով, յեթե նույնիսկ ամենապարզ հարավորությունն  
անգամ կա, անհրաժեշտ է լուսով դնել նախատեսվող  
աշխատանքի ուղղութիւնը: Առանձնապես ուշադրու-  
թյուն պետք է դարձնել ընտրելի ուղղութիւն ճշտու-  
թյան վրա, վորովհետև գիշերը շատ հեշտութեամբ  
կարելի չէ ճանապարհից չեղվել և մոլորվել: Գիշերա-

յին աշխատանքների համար անպայման լապտերներ  
պետք է ունենալ (եղեքտրական կամ հասարակ) կամ,  
ծայրահեղ դեպքում մաշակներ: Լապտերներն ու մաշա-  
կները (ֆակել) պետք է ոգտադրածել ախպես, վոր հա-  
կառկորդի կողմից նկատելի չլինի:

## 13. ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

34. Կենտրոնական կայարանի պետք ղեկավարում  
և կայարանը հիմնելու աշխատանքները, հսկում է կա-  
յարանում աշխատող բոլոր անձերի ծառայութեանը:  
Կայարանի պետին ոգնելու համար նշանակվում են կա-  
յարանի վերակացուներ (նրանցից մեկը պետք է մշտա-  
պես կայարանում գտնվի), որպէս հեռախոսիչներ և  
գլխավորաբար շտաբի կայարանում՝ հրապարակում:

Կայարանի վերակացուն լարերը ներս է անցկաց-  
նում, դժեր և անցկացնում կայարանի ներսում—հողան-  
ցում և կատարում, լարի կոմուտատորին է միացնում  
և քարթավայտեր (բիբկա) է պատրաստում: Կայարա-  
նի աշխատանքի ժամանակ, վերակացուն հսկում է ա-  
պարանների սարքինութեանը, կանոնավորում է և փո-  
քըը վերանորոգում է կատարում. անսարք ապարատ-  
ները փոխարինում է նորերով, գիծը վնասվելիս դժային  
վերակացուն ուղարկում է սարքելու:

Կայարանը հանելու (հավաքելու) դեպքում ստու-  
գում է հեռախոսների և կարելի սարքին լինելը, լցնում  
է տարրերը և իրերի անհրաժեշտ ճորդում է կատա-  
րում:

Կայարանի պետը իր ժուրնալում կենտրոնական կա-  
յարանի մյուս բոլոր կայարանների հետ միացման սխե-  
ման և գծում, կախում է բաժանորդների (արոնենտերի)



ցուցակը, ամեն ուր ստուգում ե մեկուսիչի սարքինու-  
թյունը և ստուգման արդյունքը գրանցում ե ժուրնալի  
մեջ:

35. Որսպահ հեռախոսիչը (եքսպեդիտոր) առանց  
բացակայելու գտնվում ե կայարանում, ժուրնալի մեջ  
ե անցկացնում բոլոր ստացված հեռախոսադրերը, յեթե  
կապը ընդհատվել և, հեռախոսադրերն ուղարկում ե  
հասցեատերերին թուղցիկ փոստի պոստերի և լրա-  
տարներին միջոցով: Վորոշված ժամանակին ստուգում ե  
կայարանի ժամացույցը բարձրագույն շտաբի ժամա-  
ցույցի հետ և ճիշտ ժամանակի մասին հայտնում ե ծա-  
րերի բոլոր կայարաններին և կոնտրոլ կայարաններին:

Որսպահը պարտավոր ե իմանալ ողնական կապի  
մոտակա պոստերի տեղը:

36. Որսպահ հեռախոսիչը պետք ե իմանա հեռա-  
խոսի կառուցվածքը, հեռախոսից վոչ մի տեղ չպիտի  
հեռանա, ուշադրությամբ պետք ե հետևի կանչերին  
և պատասխանի բոլոր կանչերին: Որսպահությունն  
ընդունելու ժամանակ պարտավոր ե ստուգել ապարա-  
տը, նրա պահունի մասերը: Վորեւ անսարքություն  
հայտարերելու դեպքում պետք ե հաղորդել այդ մասին  
հեռախոսային կայարանի պետին՝ անսարք ապարատը  
սարքին ապարատով փոխարինելու համար: Բացի դը-  
րանից, որսպահ հեռախոսիչը պարտավոր ե գիտենալ  
հարեան կայարանների որսպահների ազդանունները  
և նրանց տեղը: Գիծը վնասվելու դեպքում նա պարտա-  
վոր ե անմիջապես հայտնել այդ մասին գծային վերա-  
կացուին՝ սարքելու միջոցներ ձեռք առնելու համար:  
Հեռախոսադրերի ընդունումն ու փոխանցումը կատար-  
վում ե հավելված № 1 կանոններով:

37. Կոմուտատորի հեռախոսիչը պետք ե իմանա

բոլոր բաժանորդների (արձանհանների) համարները և  
ծայրերի ու կոնտրոլ կայարանների որսպահ հեռախո-  
սիչների ազդանունները, առանց բացակայելու, մշտա-  
պես գտնվում ե կոմուտատորի մոտ և ուշադրությամբ  
հետևում ե կանչերին: Նա պետք ե իմանա կոմուտա-  
տորի կառուցվածքը, վնասվածքն ուղղելու համար կան-  
չում ե վերակացուին: Բոլոր խոսակցությունները տա-  
նում ե սահմանված կանոններով: Կոմուտատորին սղա-  
սարկող հեռախոսով վոչ մի հեռախոսադիր չի ընդու-  
նում և չի փոխանցում, հեռախոսի փողը խոսակցու-  
թյան համար վոչ վոքի չի տալիս:

38. Մարտական պարագայում հեռախոսով կանչերը  
բացառապես լինում են կայարանների պայմանական  
նշաններով առանց հայտնելու դրամատի անունը, կան-  
չերով և կողով (կրճատադրով): Պայմանական կան-  
չերը տրվում են բոլոր կայարաններին առաջուց նախ-  
քան աշխատանքն սկսելը: Այդպիսի պայմանական կան-  
չերը հեռախոսով հայտնել չի թույլատրվում, վորով-  
հետեւ հակառակորդը կարող ե իմանալ:

Բացի կենտրոնական և ծայրի կայարաններից, յեր-  
կար դժեք յեղած ժամանակ (յուրաքանչյուր 4-6 կիլո-  
մետրից հետո) հիմնվում են միջնական կոնտրոլ կայա-  
րաններ: Ամեն մի կոնտրոլ կայարանում նշանակվում են  
գծային վերակացու և վոչ պակաս 3 հեռախոսիչ որս-  
պահության համար: Կոնտրոլ կայարանի որսպահ հե-  
ռախոսիչի պարտականություններն ընդհանուր են որս-  
պահ հեռախոսիչների համար: Գծային վերակացուն  
միևնույն ժամանակ հանդիսանում ե թե կայարանային  
վերակացու և թե կոնտրոլ կայարանի պետ, յեթե նա  
կոնտրոլ կայարանումն ե գտնվում: Հեռախոսիչից կամ  
թուղցիկ փոստի պատից տեղեկություն ստանալով



դծի անսարքութեան մասին, անմիջապէս դուրս ե գտ-  
լիս զծի վրա անսարքութեանն ուղղելու համար, հար-  
կաժող դեպքում իր հետ վերցնում ե աշխատանքից ա-  
զատ հեռախոսիչին:

Գծային վերակացուն պարտաւոր ե ճիշտ կերպով  
իմանալ թե իր դժերում վորտեղ են գտնուում միացում-  
ները (սրտստիկ): Կարելի հանելու ժամանակ, առաջին  
անհրաժեշտութեան դեպքում, կարելի լիովին կարգի  
յե բերում ե նորեկ ուղղում ե դաշտում կատարած բո-  
լոր միացումները:

#### 14. ԿԱՔԵԼԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՀԱՎԱՔԵԼԸ

40. Հեռախոսային գծը կարելի յե հալաքել դա-  
սակի հրամատարի պատվերով կամ զորական պետի  
պատվերով, վորի շրջանին սպասարկում ե գեծը. յերկ  
րորդ դեպքում՝ վերակացուն պարտաւոր ե, հենց ա-  
ռաջին հնարավորութեան դեպքում, ղեկուցել այդ մա-  
սին իր դասակի հրամատարին:

Գիծը հալաքելու համար յուրաքանչյուր հեռախո-  
սային կայարանի մարդիկ կադմում են մեկ խմբակ:  
Յուրաքանչյուր խմբակ աշխատում ե ինքնուրույն, աշ-  
խատանքի յե անցնում միաժամանակ յերկու կետից  
կամ մեկ ծայրից, նայած պարագային: Նահանջի ժա-  
մանակ գեծը հալաքում ե զորական պետի պատվե-  
րով միայն այն դեպքում, յերբ կոտ հաստատված կլի-  
նի զորական շտաբի դասավորման նոր տեղի հետ:

41. Գիծ կալաքելու աշխատանքը կատարելու ժա-  
մանակ մի հեռախոսիչը ազատում ե կարելի, վոր  
կալաքած ե ե զգլած ե տեղակոն առարկաների վրա,  
մյուս հեռախոսիչը, ընթանալով առաջին յետեւից  
կձկում ե կարելի դատարկ կոծի վրա, վորը հալած ուն-  
չ

աջ ուսին, ե կձկելով կոծը բաց ե անում ծայրերի կա-  
պը. յերրորդ հեռախոսիչը վերցնելով իր հետ հեռախո-  
սը ե մյուսը իրերը, ոգնում ե յերկրորդին ե հերթա-  
փոխվում ե նրա հետ աշխատանքը կատարելիս:

Վերակացուն գտնվում ե այն շրջանում, վորտեղ  
ավելի դժվար ե կամ ավելի շուտ վորտեղից պետք ե  
գիծը հալաքել:

#### 15. ՁՈՂԵՐՈՎ ՀԵՌԱԳՐԱ-ՀԵՌԱՆՈՍԱՑԻՆ ԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

42. Ձողերով դաշտային գծեր կառուցելու համար  
գործադրվում ե պղնձե ալրած լար՝ 2,1 մ տրամա-  
դծով: Լարը 1.300 մետր յերկարութեան կձկում են յեր-  
կաթե կոծի վրա,  $32\frac{3}{4}$  կկ. մեկ կլումետր (մեկ վերս-  
տը—2 փութ): Կոծը տեղադրուելու հարմարութեան  
համար գործ են ածում փոխադրող շրջանակ: Պղնձե  
լարը կախում են մեկուսիչների վրա, վորոնք ամրաց-  
ված են լինում ձողերի վրա: Ձողի յերկարութեանը մոտ  
365 մ. ե, հաստութեանը 4 մմ.: Ձողի ներքեի ծայրին  
հաղցրած ե կոնուսաձև յերկաթե ծայրապանակ (բաշ-  
մակ), ծայրին հաղցրած ե յերկաթե ող: Գիծը ճանա-  
պարհների վրայով կտրել անցկացնելու համար կա ճա-  
նապարհամերձ ձող, վորը ծառայում ե սովորական  
ձողի տակը տալու համար. այդ ձողը ներքեի ծայ-  
րով անց ե կացվում ձողի վերեի ծայրի վրա յեղած  
հողի մեջ մինչև ճանապարհամերձ ծայրապանակին դեմ  
տնելը, վորը գտնվում ե 120 քանտիմետր վերեի ողից  
ցած, հետո պնդացվում ե վերեի ողի պտուտակով:  
Մարիող ձողի յերկարութեանն ե 6 մետր: Ձողերը տն-  
կելու ժամանակ փոսեր փորելու համար կան յերկաթե  
լինգեր ե գայլիկոն (բուրդու), վորով ոգտվում են,



յերբ գետինը պինդ և կամ սառած: Զուրբը գետնի մեջ ամրացնելու համար կողքերից տնկում են փայտե ցցեր (պինդ փայտից), ցցերը տեղափոխելու համար կա բեզեհնոց պայուսակ, կտավ կամ կաշի:

43. Ծայրերի և անկյունային ձողերն ամրացնելու համար կան ձգիչ սեպեր և պարաններ:

Գիծը տեղական առարկաների վրա գցելու համար դործադրում են թեթև յեղարաններ:

Գիշերը գիծ գցելու ժամանակ դործ են ածում լսող-տերներ և նավթի մաշարներ:

44. Նախքան ձողերով գիծ գցելու աշխատանքներն սկսելը տեղանքի չրջադիտություն և (рекогносцировка) կատարվում: Շրջադիտության արդյունքն այն և լինում, վոր ա) ընտրում են ամենափայլաճ ուղղությունը գծի համար, բ) գտնում են թե ինչպես և հարմար կառուցել գիծը (գծային նյութերը տանել մոտեցնելու և սայլով կրելու տեսակետից), գծին սպասարկելու և դիտելու համար, և դ) վորքան հնարավորություն կա ամենից ավելի ծածկված կատարել գիծ գցելու աշխատանքը: Զուրբերով գիծ գցելիս, պետք է նկատի ունենալ հետևյալը. ա) գիծը ուղիղ պետք է անցկացնել և վորքան հնարավոր է ծռվածքներ չափաի ունենա, բ) պետք է քողարկված լինի վերայից և ուղային դիտողությունից, գ) լարը պետք է ապահով լինի անց ու դարձ անող դումակների և ձիավարների միասնաժողովից, և դ) առանց դրա համար ծայրահեղ անհրաժեշտության, չպետք է անցկացնել քաղաքների, գյուղերի և անտառների միջով:

45. Աշխատանքը կատարելու համար յուրաքանչյուր ուսյունի համար նշանակվում և աշխատող դասակ վեց ջոկից բաղկացած (բանվորներ լրիվ կամ կրճատ

թվով), գծային նյութերով և դործիքներով ծայրերի հետ: Աշխատող դասակի հաշիվն ու դործիքների քանակը ցույց են տրված № 2 աղյուսակում:

Յուրաքանչյուր աշխատող դասակ աշխատում և ինքնուրույն և առաջուց ուղարկվում է դեպի ուսյունի սկզբնական կետը (պունկտը):

46. Առաջին ջոկը գնում է առջևից, ջոկի վերակացուն ցույց և տալիս գծի ուղղությունը, պտույտ կատարելու տեղերը և ճանապարհի ձողերը տնկելու տեղերը: Համար առաջին բանվորը վերակացուն ցույց ցույց տված ուղղությամբ հաշվում է 65-75 քայլ (նայած դասակի հրամատարը ինչ հեռավորություն և ցույց տվել ձողերի միջև), յերկուական ցից է դրում այն տեղերում, վորտեղ սոյորական ձողերը պետք է տնկեն և յերեքական ցից դրում սկզբնական, անկյունային և ճանապարհի ձողերի համար:

47. Յերկրորդ ջոկի բանվորները գնում են դեպի ձողերը տնկելու տեղերը, այդտեղ նրանք կանգնում են յերեսը դեպի գծերի սկզբնական կետը (պունկտը) համարների կարգով. այսինքն առաջին համարը սկզբնական ձողի տեղում, յերկրորդ համարը յերկրորդ ձողի տեղում և այլն: 5-րդ ջոկի վերակացուն առաջին յերեք բանվորներին համարաբեցնում է կանգնեցնելով ծոճրակների դիմաց, վորի համար բանվորները ուղղահայաց բարձրացնում են լինգերը յերեսը առաջ ներքևի ծայրը կրծքին մակերեսով, կրծքի մեջտեղում, համարաբեցնուց հետո, վերակացուն ազդանշանով բանվորները ցած են իջեցնում լինգերը և դնում վորքի թաթերի միջև վոսեր տեղը նշան անելու համար, այնուհետև վոս են վորում 30-46 սմ. խորությամբ. ճանապարհի ձողերի համար վոս



են փորում մինչև 60 սմ. խորությամբ: Փոս փորել վերջացնելուց հետո, բանվորները, առանց սպասելու մեկմեկու, վաղում են դժի յերկարությամբ դեպի սյուները տնկելու հետևյալ տեղերը, վաղելիս հանձնելով լինող մնացածներին: Յեթե գլխի պետք և անցկացնել լարը տեղական առարկաների վրա կանխելով, առանց ձողեր տնկելու, այն ժամանակ 2-րդ ջուկի բանվորները տեղափոխում են յերկու յեւրան, կոր ցցեր, դաշիկոնիկներ և այլ անհրաժեշտ իրեր և դործիքներ:

48. 3-րդ ջուկի բանվորները ձողերը տնկելու տեղն են բերում իրերը, դարձում են դեռնին գծի ուղղությամբ ուղղաձիգ մեկուսիչներն ու ցցերը: Գլխի տեղական առարկաներին կախելու ժամանակ 3-րդ ջուկը ուղնում և 2-րդ ջուկին:

49. 4-րդ ջուկի բանվորները չըջանալի վրա տանում են կոճը, մեկը (համար 4-րդ բանվորը) հետևում և լարի յետ կծկելուն, կապ ընկած տեղերը ուղղում և և միացնում և ծայրերը: Համար 5-րդ և 6-րդ բանվորները, հենց վոր վերջանում և առաջին կոճի լարը, բերում մոտեցնում են նոր կոճը, չըջանալի վրա դրած:

50. 5-րդ ջուկը: Համար 1-ին բանվորը, բաշակառու չափ լարի ծայր թողնելով կայարանը գլխի տանելու համար, այդ ծայրն անց և կացնում մեկուսիչի կտրուների (կտվածքի) միջով և վաթաթում և նրա պատերի վրա ութ թվանշանի նման, վորից հետո կանգնեցվում և ձողը: Համար 2-րդ բանվորը լարը անց և կացնում յերկրորդ ձողի մեկուսիչի կտրուների մեջ, միաժամանակ կանգնեցնելով փոսի մեջ, 1-ին համարի հետ բարձրացնում և ձողը: Յերբ վոր լարը ձգված կլինի և ձողերը տնկված հաստատված, բանվորները վաղում են դեպի հետևյալ

յերկու ձողերը:— 1-ին համարը դեպի 3-րդ ձողը, իսկ 2-րդ համարը դեպի 4-րդ ձողը և այլն: 3-րդ և 4-րդ համար բանվորները ձիգ են տալիս լարը ամեն մի 2-3 ձողամեջ (արանք) հետո, անմիջապես ընթանում են 1-ին և 2-րդ համար բանվորների յետևից: 5-րդ համար բանվորն առաջին ձողի մոտ 3 քայլ հեռու դեռնի և խլ-փում ձիգ սեպը, հետո գնում և միշտ 1-ին համար բանվորի հետ միասին և ամրացնում և ձողերը ցցերով: 6-րդ համար բանվորը նույն աշխատանքն է կատարում, ինչ վոր 5-րդ համարը, կացինը ձեռքին դնում և 2-րդ համար բանվորի հետ:

Սկզբնական, ծայրերի, ճանապարհի և անկյունային ձողերը տնկելու ժամանակ յերեք սեպ են խփում դեռնին: Վորդանների վրա, անկյունային ձողերը, ինչպես և սկզբնական ձողերը, ամրացվում են ձիգներով: 5-րդ ջուկի վերակացուն հետևում և լարի ձրգվածությանը և իր ջուկի աշխատանքին:

51. 6-րդ ջուկը լարը ձիգ տալով ստուգում և դրած գծի ձիգ դրությունն ու կայունությունը, կտրում և մոտակա ճյուղերը, վորպեսզի նրանք 90 սմ. լարին մոտիկ չլինեն:

Վերակացուն դեկավարում և ամբողջ աշխատանքը, կատարված դիժը ստուգելու համար ամեն մի կիլոմետրի վրա հեռախոսը միացնում և գծին, յեթե պատասխան չի ստացվում սկզբնական կայարանից, յետ և գնում գծի ուղղությամբ, վորոնում և վնասված տեղը և սարքում և այն:

Ձողերով գլխի դցելու արագությունը դասակարգվում 2-3 կիլոմետր մի ժամում:

52. Ինչպես պետք և ձողերով գծեր կառուցել նախնու և ավագու տեղամեկնում, ժայռու տեղում, լեռներում և ձմեռը:



ա) նախնադատ և ավագատ տեղամեքում ձողերը տնկվում են քարակույտերի կամ հողաթմբերի վրա մինչև մեկ մետր խորութեամբ: Յեթե ձողերը չեն պահվում դեռնի մեջ, այն ժամանակ պետք է ամրացնել ներքևում խաչածե փայտերով, քարերով, յետոտանիններով և այլն:

բ) Ժայռոտ գետնում և լեռներում, վորտեղ հնարավոր չի փոսեր փորել, ձողերն ամրացվում են յետոտանիններով (ձողերից կամ բարակ կանջուխներից) կամ ներքևում շուրջը դարսում քարերով:

դ) Յեթե գիծն անցնում է շեղակի սարից ցած կամ դեպի սարի բարձրությունը, այն ժամանակ լարը պետք է ամրացնել ութածե յուրաքանչյուր մեկուսիչի վրա:

դ) Ձմեռը խորը և ամուր ձյուն չեղած ժամանակ ձողերը պիտի տնկել  $1\frac{1}{2}$ -1 մետր խոր և ամուր պնդացնել ձողի մոտ յեղած ձյունը, իսկ յեթե ձյունը խոր չէ, պետք է ձողի շուրջը ձյուն կիտել և ամրացնել: Սառած դեռնի վրա փոսեր են փորում դայլիկաններով: Սառույցի մեջ փոսեր են փորում լինգով ( $\frac{1}{2}$ - $\frac{3}{4}$  արշին) և ձողերն ամրացնում են ցցերով, իսկ յեթե ձյուն կա, պետք է ձյուն կիտել ձողի շուրջը և պնդացնել:

# 16. ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԿԱԲԵԼԸ ԿԱՆՁՈՒԽՆԵՐԻ (жерди) ՎՐԱ ԿԱՆԵԼԸ

53. Յեթե անհրաժեշտ է կառուցել ժամանակավոր հեռագրական գիծ դաշտային հեռախոսային կաբելով և յեթե չկան հատկապես դրա համար պատրաստված ձողեր և տեղական առարկաներ, վորոնց վրա կարելի չէր կախել այդ կարելը, այն ժամանակ կարելի չէ դիծը կախել կանջուխների (жердь) վրա: Կանջուխները պետք է 3-4 մետր յերկարություն ունենան, վերևի կտրվածը 4-6 սմ. դիամետրով  $1-1\frac{1}{2}$

վերջով): Կանջուխները պատրաստում են նախորդ և աշխատանքն սկսելիս կրում բերում են դիծը կառուցելու տեղը: Ճանապարհը կտրել անցկացնելու համար կանջուխները պետք է վրջ պակաս 5 մետր յերկարություն ունենան, իսկ յեթե կան ճանապարհային ձողեր, այն ժամանակ ավելի լավ է տնկել այդպիսի ձողեր: Կարելի կանջուխներին կապում են հանգույցի (կապի) ձևով (петлей), կատարից 2-3 դյույմ ցած: Վորպեօզի կաբելը չօհի կանջուխի վրայից, անհրաժեշտ է քերթեր անել կացնով կամ դանակով: Նախքան կապելը, կարելի պետք է ձգել այնպես, վոր կանջուխները տնկելուց հետո կարելի չառ ուժեղ ձգված չլինի և վրջ ել չառ կախ ընկած: Կանջուխների արանքները պետք է 30-40 մետր լինի:

54. Յերկարացնի գիծ գցելու ժամանակ, յերկրորդ լարը պետք է կապել 6-10 դյույմ առաջին լարից ցածր, պետք է հետեվել, վոր լարերի կախ ընկածությունը միատեսակ լինի: Կանջուխների յերկարությունը յերկշար դծի համար պետք է լինի 4 մետր: Կանջուխների վրա 3, 4, 5 լար կախելու դեպքում կանջուխներին խաչածե խիտում ամրացնում են փայտե ձողիկներ (արափերա), վորոնց յերկարությունն է 3 լարի համար 30 սմ. (12 դյույմ), 4 և 5 լարի համար 45 սմ. (18 դյույմ) Ձողիկերի վրա կարելի կապելու տեղերում քերթեր են անում: Կարելի ձողիկի վրա փաթաթում են մերքի ձևով: Մի լարանի դիծը դառակով կառուցելու արագությունն է մինչև մեկ կիլոմետրը մի ժամում:

55. Զողերով գծեր հավաքելուն ձեռնամուխ են լինում իր վաշտի հրամատարի կարգադրութեամբ: Վերջինիս հետ կապը կորցնելու դեպքում, դիծը կարելի չէ հավաքել միմեկին այն պետի թույլատրութեամբ, վորի



ռայոնին և սպասարկում ամփայլ գլխով: Գլխով համարվում համար յուրաքանչյուր ռայոնի համար նշանակվում են բանվորական դասակ: Առջևից դնում են 5-րդ ջոկը, հետո 1-ին, 3-րդ, 2-րդ, 4-րդ, և 6-րդ ջոկերը, ամեն մի բանվոր կատարում է աշխատանքը հակառակ այն աշխատանքին, վորը կատարել են կառուցման ժամանակ, բացի 2-րդ և 6-րդ ջոկերից (2-րդ ջոկը փոխադրվում 4-րդ ջոկին, իսկ 6-րդ ջոկը դնում է բոլորի հետևից և համարվում է մոտացված իրերը):

56. 5-րդ ջոկի բանվորները կացիններով 5-րդ և 6-րդ համարները թափ տալով դուրս են հանում ցցերը և ձգել ցցերը (վազելով մի ձողից դեպի մյուսը՝ ինչպես կառուցելու ժամանակ): 1-ին և 2-րդ համար բանվորները դուրս են հանում ձողերը, բաց են անում լարը և ձգելները: 3-րդ և 4-րդ համար բանվորները վազում են մի ձողամիջից դեպի մյուսը, պահում են լարը վերջին հանած ձողի հետ, պահում են գլխով ընկնելուց: Վերակացուն հսկում է աշխատանքի վրա:

57. 1-ին ջոկի բանվորները համարվում են սեպերը սյալուսակի մեջ և տանում դնում են սայլի վրա: Վերակացուն ղեկավարում է 2-րդ և 4-րդ ջոկերի աշխատանքը: 3-րդ ջոկի բանվորները համարվում են ձողերը, ձգել ցցերը և պարանները տանում դնում են սայլի վրա:

58. 4-րդ ջոկի բանվորները 1-ին, 2-րդ, 3-րդ համարները գծի յերկայնություն չլինելով կրում են փոխադրել չլինելով կրճի հետ, 3-րդ համարը պտտելով կոթը դնալու ժամանակ կծկում է լարը: Համար 4-րդ բանվորը ուղղում է ու հարդարում է լարը, հետևում է, վորպեսզի յետեվում չմնա լարի յերկար չլծկած հանգույցներ (կապ ընկած տեղեր):

Համար 5-րդ և 6-րդ բանվորները հերթով փոխադրվում են 3-րդ համարին: Կծկելուց հետո, կոծը տանում դնում են սայլի վրա և վերցնում են դատարկը:

## 18. ԿԱԲԵԼԱՅԻՆ, ՉՈՂԵՐՈՎ ՅԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԳԾԵՐԻ, ՀԵՌԱԳՐԱ-ՀԵՌԱԿՈՍՍԱՅԻՆ ԿԱ-ՑԱՐԱՆՆԵՐԻ, ՌԱԴԻՈԿԱՑԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՌԱԶՄԱ-ԱՂԱՎՆԻԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

59. Կապի գործերի կարմիր բանակայինը հաստատվելով հիշի, վոր ամեն մի բաց հեռագրա-հեռախոսային գլխով, ռադիո-հեռագրական կայարանի անտեննա և նրա շուրջը տեղափոխված մեքենաների ու ապարատների յերկարակիները, խոսակցություն ժամանակ բերանից մի աս-վելով բան թողնելը՝ հանձնվող և ընդունվող տեղեկու-թյունների, պատվերների մասին, հնարավորություն է տալիս հակառակորդին. ա) վորոշելու շտաբի դասա-վորման տեղը և զորական միավորությունների թիվը. բ) իմանալու մեր զորքերի մասին այնպիսի տեղեկու-թյուններ, վորոնք հակառակորդին չափաի հայտնի լի-նեն. գ) ծածուկ բռնելու և լսելու տրվող տեղեկու-թյունները և դ) հեշտությամբ քայքայելու կապի ցանցը և ալգալիտով խանդարելու զորքերի ղեկավա-րությունը:

Այդ պատճառով վոր մի հեռագրախոսային գլխով, ռադիոկայարան, ադալիստուն չափում է մնա առանց ջո-ղաբեման: Գտնվելով աշխատանքում կարմիր բանակա-յինը պետք է կարողանա իրեն նույնպես քողարկել:

60. Քողարկմանը ձեռնամուխ լինելով, ամեն մի կարմիր բանակային չափում է մոռանա, վոր՝ ա) չի կա-րելի տեղանքի սկզբնական տեսքը փոխել. բ) այն բո-



լոր միջոցները, վորոնց ուղությամբ կառուցումներ  
կատարվում և դիժ են անցկացնում, չպետք է շրջապա-  
տող վայրից խտորեն տարբերվեն. դ) գործածությա-  
նյութերը պետք է համապատասխանեն տեղանքի հաս-  
կանիչներին. դ) ամենից ավելի դրական արդյունքներ  
տալիս հակառակորդի կողմից հայտարարվող միջոցնե-  
րու կառուցումների հատկանիշները. ե) քողարկման մի-  
ջոցները չպետք է դանդաղեցնեն աշխատանքի նորմա-  
լնթացքը:

61. Այն նյութերը, վորոնցով կապի զորքերը ուղղվո-  
ւեն, հետևյալներն են՝ ա) ծառեր, բ) դաշտերում յե-  
ղած ցանկապատերը, գ) կանաչ խոտերը, յեղեղները  
դաշտերը, վորոնք ցանված են արևածաղիկներով, յե-  
ղիպտացորենով, տարեկանով և այլն. դ) խոտի դեղ-  
խոտը չորացելու շրջանակները, ե) ծառի ճյուղերը  
թփուտները, գ) սահմանամեջերը, խրամները և ակո-  
ւները դաշտերում. ը) մանր խիճը լեռներում թ) խաղ-  
ղի այգիները, պարտեզները և այլն:

62. Ուղղվելով այդ նյութերով, կապի զորքեր  
պետք է բավական հմուտությամբ ունենան հետադար-  
ժախոսային (հ/հ) դիժը հարմարեցնել տեղանքին ա-  
պես, վոր նկատելի չլինի: Կապի յուրաքանչյուր միջոց  
վորը հաստատվում է տեղանքում, պետք է վոչնչո-  
ւ չտարբերվի տեղանքից:

63. Մշտական և ճողերով գծեր կառուցելու աշխա-  
տանքների ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետե-  
յալ պայմանները. ա) չթողնել վոչ մի փայլուն կե-  
սյունների վրա, բ) ճիժեր չկտրել քողարկված առարկա-  
յի մոտից:

64. Դրա համար անհրաժեշտ է՝

ա) Սյունը տնկելով չթողնել թարմ հողը, առան-

այդպիսին ծածկելով ճիժով, արմատներով, կանաչ խո-  
տերով կամ այլ առարկաներով, վորոնք առաջուց յե-  
ղել են այդ վայրում. ընդվորում այդ առարկաների  
պետք է վերցնել, վորքան հնարավոր է, աշխատանքի տե-  
ղից հեռու:

բ) Մեծ ուղատներ (պրոսեկա) չկտրել անտառ-  
յին տարածություններում, չկտրել չտանել ճանապարհով,  
այլ միշտ տանել անտառով, ընդվորում յեթե անտառի  
ծառերը սյուններից ցածր են, այն ժամանակ կտրելի-  
յե և ծառերն ուղղադրվել:

դ) Արևի կողմ յեղած ժամանակ առավելապես պետք  
է դործածել կանաչ և անփայլ մեկուսիչներ:

դ) Լեռնային վայրերում սյուները պետք է կանդ-  
նեցնել ժայռերին ուղղահայաց և հասնել նրանց ճա-  
նապարհի վրա, ուղղվելով ժայռերից, ինչպես սյու-  
ններից:

ե) Տափաստաններում պետք է խուսափել քողարկ-  
ման արհեստական միջոցներից:

65. Ձողերով գծերի քողարկումը պետք է կատարել՝  
ա) վորքան հնարավոր է ձողերը տնկելով ցանկապա-  
տերին մոտիկ, դաշտերին, մենակ ծառերին, խոտի դե-  
ղերին մոտիկ. բ) լեռնային վայրում—ավելի մոտիկ  
ժայռերին, մենակ բարձր քարերին, ծառերին:

66. Կաբելային գծերի քողարկման ժամանակ ան-  
հրաժեշտ է՝ ա) կաբելը ծածկել վորևէ բանով, ընդվո-  
րում, նրա ծածկարանը պետք է այնպես կառուցել, վոր  
տեղական միջոցները ծածկեն կաբելը, և վոչ թե դար-  
վող առարկաները, վորոնք չկան այնտեղ, վոր-  
տեղ կաբելն է անցկացվում. բ) խուսափել բաց,  
տրորված կանաչով արահետներից, կաբելը, վոր-



քան հնարավոր ե տանել խնամի (կանալի) միջով, և կաբելը թաղել հողի մեջ, հմտորեն ընտրելով ծածկարան դոյութուն ունեցող դեմանի գույնին. դ) լեռներում կաբելը ծածկել քարերով, խճով, ավազով և կաբելը դաշտերով, թփուտներով անցկացնելու ժամանակ չտրորել կանաչ խոտը:

67. Ռադիո կայարանները կառուցելու աշխատանքները և այդ կառուցումը քողարկելու ժամանակ հարկավոր ե՝ ա) յերկանխիկները, կայմը, (մաշտա) թագը ցնել մանր թփուտներում, պարտեզներում, նոսր անտառում. բ) կայմը հարմարեցնել վայրում յեղանառարկաներին (մեծակ չոր ծառներ, գյուղական շան թարգելներ, ձողերով ջրհորներ). գ) լեռնային հովիտներում կառուցել լանջերին, խնամքով թաղցնելով նյութական մասը, և դ) խլացուցիչով, վորքան հնարավոր է, թաղցնել շարժիչի աղմուկը:

68. Ոպտիկական կայարանը քողարկելու ժամանակ անհրաժեշտ ե՝ ա) աղանջանային դործիքներ զայելու կողմը չթողնել բաց. բ) ֆոկուսային հեռավորություններ լուսային ճառագայթներն ու կանոնավորումը (ռեդուկիրովկա) կատարել միայն իսկական հեռակալության վրա:

## 19. ԳԾԵՐԻ ՍԱՐՔԻՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

69. Հեռախոսային գծերը միշտ պետք է սարքվի պահել, գլխավորապես ուղադրութուն դարձնել մեկուսիչներին սարքինության վրա: Այդ առանձնապես կարելի է այն ժամանակ, յերբ հակառակորդը մոտիկ գտնվում, վորովհետև մեկուսիչի վնասվածքի դեպք

քում կողքի հաղորդակցութուն ե ստանում հողի հետ և գիծը կորցնում ե իր յերկարանի հատկութունը, մի հանգամանք, վոր հնարավորություն ե տալիս հակառակորդին ծածկել լսելու մեր խոսակցությունը: Այդ պատճառով լարերի մեկուսիչներին սարքինության ստուգումը պետք է կատարել ամեն որ առավոտյան և յերեկոյան և, բացի դրանից, ցանցի անգամադրման ույունը ամեն ուժեղ դնդակոծվելուց հետո:

70. Գծերի ստուգումը կատարում են ոմմետրով (դժային ստուգիչ) կամ վոլտմիլլիամպեր մետրով: Յեթե պետք է ստուգել մի լարանի դիծ, վերակացուն պատրաստելով միլլիամպերմետրի շղթան, մարտկոցը— բատարեան (վոչ պակաս չորս սարքին տարր-եղմեհա) և հողի ձողիկը, լավ խրած հողի մեջ, հեռախոսով խողրում ե հարևան կայարանին տալ հինգ րոպեյով «լարի մեկուսացումը», այսինքն՝ հեռախոսիչը անջատի հեռախոսից լարը և պահի այն մեկուսացրած, վորից հետո վերակացուն անջատում ե իր հեռախոսից լարը և միացնում ե այն միլլիամպերմետրի ազատ սեղմիչին. յեթե մեկուսացումը սարքին չի, ստացվում ե փակ, առանձնացած շղթա հողի միջով և վոլտմիլլիամպերմետր ցույց կտա սլաքի թեքումը (ստուգում ոմմետրով, մեկուսացումը սարքին լինելու դեպքում պետք ե ցույց տա վոչ պակաս 10-000 սմ.):

71. Յերկար դիծն ստուգվում ե նույնիկերպ, ինչպես մի լարանի դիծը, միայն յուրաքանչյուր լար առանձին: Սկզբում կարելի յե ստուգել առանց հարելան կայարանի հեռախոսի ջիղերի ծայրը առանձնացնելու (առանց մեկուսացնելու), պատրաստած շղթան, ինչ-



պէս վերեւում ասված է, միացվում է կայարանային հեռախոսի գծային սեղմիչներէի մեկին: Գործիքի սլաքի անհատախոսը թերութեան անգամ ցույց կտա, վոր լսորերէի մեկի մեկուսացումը սարքին չէ:

72. Բոլոր դեպքերում, յերբ լարի մեկուսացման անսարքութիւնը եւ հայտարարվում, գծային վերակացուն անմիջապէս գիծ եւ դուրս գալիս եւ վերացնում եւ անսարքութիւնը:

73. Հակառակորդին մոտիկ տեղում եւ այն վայրում, վորտեղ բնակչութիւնը թշնամարար եւ տրամադրված դեպի մեղ, պետք ե հսկել, վոր տեղական բնակիչները, հակառակորդը կամ նրա լրտեսները չլսեն մեր գծով, վորի համար պետք ե ամեն որ ուշադրութեամբ դնեն գծերի ամբողջ ցանցը:

Գծերը դիտարկողը կերպով վնասելու դեպքում, անհրաժեշտ ե հաճախ դնեն իր ռադիոյ գծերը: Մի քանի դեպքերում հնարավոր ե, վոր գծերը պահպանելու համար պահանջ դրացիի դժի յերկարութեամբ հատուկ դետքեր ուղարկել այդ նպատակի համար գործողված խմբից:

74. Յեթե մի ուղղութեան վրա անցնում են միաժամանակ մի քանի գծեր, այն ժամանակ անհրաժեշտ ե այդ գծերը նշան անել վորեւե նշաններով (ձողիկներ համարներով, գունավորում յերիզներով (тесемки ե այլն). այդ նշանավոր չափով կհստացնի վնասված կաբելի գտնելը:

## 20. ՎՆԱՍՎԱՆՔՆԵՐԻ ԳՏՆԵԼՆ ՈՒ ՎԵՐԱՑՆԵԼԸ

75. Կարելային գծերի վնասվածքները յերկու տեսակ են լինում. ա) կաբելի մեկուսացման փչացում, բ) կաբելի ջիղի կտրվելը, ընդվորում կտրվելը կարող ե լինել պարուրի կտրվելը ե ջիղի կտրվելը (լիակատար կտրվելը) ե միայն պարուրի կտրվելը (ներքին կտրվածք):

Վորպէս կանոն, վնասվածքը վորոնելու ե այն վերացնելու համար վերակացունները գիծ են դուրս գալիս միաժամանակ յերկու կայարաններից, վորոնց միջև հայտարարված ե անսարքութիւնը:

76. Վնասվածքն գտնում են հետեւյալ ձևով.

ա) վերակացուն իր հետ ե վերցնում պահունի հեռախոսը, հեռախոսային պայուսակը գործիքներով միասին ե նյութեր:

բ) Ստուգում ե կայարանային հեռախոսի սարքի նութիւնը ե ներքին գիծը (ներս տարած գիծը, հողանցումը ե այլն) համոզվելով, վոր սարքին ե, այնուհետեւ գիծ ե դուրս գալիս:

գ) Գնալով դժի յերկայնութեամբ, գնում ե այդ գծի արտաքինը:

Յուրաքանչյուր 100-200 մետր անցնելուց հետո միացնում ե իր հեռախոսին ե հերթով կանչում ե յերկու կայարաններին պայմանական կանչերով:

դ) Յեթե իր կայարանն ե պատասխանում ե չի պատասխանում հարեման կայարանը, այդ նշանակում ե վնասվածքը առջևիւմ ե ե վերակացուն չարունակում ե առաջ դնալ:



## 21. ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՈՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

77. Աշխատանքի ժամանակ կարելի չառ ուժեղ չպետք է ձիգ տալ. կարող է ջիղը կտրվել, հանգույցները (կապերը) քանդել, վորոնք նպաստում են ջիղի վորոշվելուն և մեկուսացման փշտնալուն:

Գծից հաւաքած կարելի է հնց առաջին հնարաւոր դէպքում պետք է յետ կծկել կոճից չորացնելու և զննելու համար: Դրա համար 20-30 մետրի վրա միմյանցից հեռու ցցեր են խփում գետնին, վորոնց շուրջը վաթաթում են կարելի շարքերով: Կարելի մաքրում են ցիխից, սարքում են վնասված տեղերը և փոխարինում են ժամանակավոր միացումները (կապերը) ավելի հուսալի միացումներով (կապերով), վորից հետո կծկում են կոճի վրա:

78. Տարվա մեջ ամենաքիչը յերկու անգամ պետք է զննել ստրուղջ կարելի, նորոգել և նրա պարուրը ծծեցնել բաղադրությամբ (ոգոկերիտը փայտածուխի խառնուրդով), վորը պահպանում է նրան փակուց: Ամեն անգամ, յերբ դորամասը կարելի կոճ է ստանում և յերբ նորոգում են կարելի, պետք է ստուգել թե վորքան անվնաս են ջիղերը և մեկուսացումը: Ձիղերի անվնասությունը ստուգելու համար կարելի ծայրերը միացնում են դաւլանոսկողի (վորտմիլիամպերմետրի) հետ և 1-2 տարրերի (եղեմնտների) հետ, սլաքի հանդիստ թեքումը ցույց է տալիս, վոր ջիղը սարքին է: Ձիղը կտրված լինելու դէպքում սլաքը չի թեքվում կամ չի տատանվում: Մեկուսացման սարքնությունն ստուգելու համար կարելի մի ծայրը միացնում են մարտիկ-

ե) Յեթե չի պատասխանում իր կայարանը, այլ պատասխանում է հարեան կայարանը, այդ նշանակում է վնասվածքը բաց է թողել, անցել է.—վերակացուն վորոնում է վնասվածքը դեպի յետ դառնալով:

զ) Գտնելով կարելի կտրված ողերը, վերակացուն իսկույն միացնում է նրանց, հետո միացնելով իր հետախոսին հերթով կանչում է յերկու կայարաններին, համոզվելով, վոր յերկու կայարաններն էլ պատասխանում են, վերջնականապես միացում է կտտարում և վերադառնում է իր կայարանը:

ը) Ներքին կտրվածքը պետք է վորոնել նույն ձևով, միայն վորոշելով այն տարածությունը, վորտեղ ներքին կտրվածքն է, պետք է միացնել գծին հաճախակի, և հետո կտրված տեղը շոշափում են ձեռքով:

Յեթե ներքին կտրվածքի վորոնումը չառ ժամանակ է խլում, այն ժամանակ կտրված տեղի տարածությունը կապել մի կտոր աղառ կարելով, վորպեսզի չուտով վերականգնվի կապը և այնուհետև խնամքով պետք է վորոնել վնասվածքը:

թ) Գծին միացնելու ժամանակ պետք է ոգոլվել կարելի յեղած միացումներից (սրոստով), իսկ ամրուղջ տեղերում պետք է միացնել զնդասեղի ոգնությամբ:

ժ) Յեթե գծին միացնելու ժամանակ կայարաններին խոսակցությունները լսելի կլինեն, այն ժամանակ հարկավոր է սպասել մինչև կվերջանան խոսակցությունները և հետո միայն կանչել կայարանին:



ցի բեվեռին (6 տարր), յերկրորդի յերկրորդ բեվեռը միացնում են դալմանոսկոպի (վրտմիլլիամպերմետրի) հետ, դործիքի յերկրորդ սեղմիչը միացված հաղորդիչով (պրովոդներով) մետաղե թերթի հետ, վորը ջրով ամանի մեջ է կոխած, մյուս ծայրից կաբելը աստիճանաբար քաշում են ջրի միջով, պահելով մեկուսացման տեսակետից կասկածելի միացման տեղերում: Անսարք մեկուսացումով տեղը ջրի մեջ ընկղմելու դեպքում դալմանոսկոպի սլաքը թեքվում է:

79. Ձողերով գծերի նյութեղենի խնամքը: Պղնձե լարը պետք է պահպանել  $1\frac{1}{2}$  կիլոմետր յերկարությամբ կծկած յերկաթե կոճերի վրա: Լարը պետք է կծկել հավասար, կանոնաւոր շարքերով, բոլոր կտրված տեղերը պետք է խնամքով միացված լինեն, կապ ընկած տեղերն ու հանգույցներն ուղղած:

Ձողերը պահել նրանց վրա պտուտակված մեկուսիչներով, կապել տաս հատ միասին և հենել շենքի մեջ պատին կամ դարսել շարք-շարք իրար վրա արանքները տախտակներ դնելով:

Սայլի վրա ձողերը պետք է դարսել բոլորը մեկուսիչները մի կողմի վրա ախպես, վոր վերջիններս իրար չչփվեն և չկտրվեն:

Գործիքներն ու մնացած նյութերը պահվում են շենքերում լաստանների վրա (ստելաժի), իսկ սայլերի վրա պահվում են դարսվածքի համար կանոններով սահմանված տեղերում. յուրաքանչյուր 3 սայլի վրա դարսում են գծային գույքը՝ 8 կիլոմետր յերկարության վրեժ կառուցելու համար:

## 122. ՄՇՏԱԿԱՆ ՀԵՌԱԴՐԱ-ՀԵՌԱՆՈՍԱՅԻՆ ԴԾԵՐ

80. Մշտական հիւ գծերը կառուցում են կապի զորքերը հակառակորդից հեռու յեղած ժամանակ, մեծ շտաբներին կապ տալու համար, գլխավորապես հեռադրով աշխատելու համար:

Սյուպիսի գծերը կառուցում են սյուներով, նրանց վրա կախելով մերկ յերկաթե լարեր հատուկ մեկուսիչներով: Գիծն ունենում է մեկ կամ մի քանի լարեր:

81. Մշտական գծերը սպասարկվում են կոնտրոլ պոստերով (կայարաններով), վորոնք դասավորվում են վորոշ շրջաններում:

Լարերը ստուգելու համար գծի վրա վորոշ տարածության վրա տնկում են կոնտրոլ սյուներ, վորոնց վրա կան հատուկ կոնտրոլ սեղմակներ: Բաժանելով այդ սեղմակները կարելի յե ստուգել լարը առանձին թե մեկ և թե մյուս կողմը: Ստուգումը նույնիսկ պիտի լինում, ինչպես կարելային գծերինը:

Բացի դրանից, կոնտրոլ սյուների վրա կարելի յե ամեն տեսակի իրար մեջ միացումներ կատարել, վորոնք անցնում են լարերի գծով, կտոր քցել, խաչմերուկել, մեկուսացում և այլն:

82. Մշտական գծով կարելի յե միաժամանակ աշխատել Մորզեյի ապարատով և խոսել: Փոնիկական հեռախոսով, վորի համար հեռախոսը միացվում է հատուկ խտացուցիչի (կոնդենսատորի) միջոցով: Գծային հեռախոսային սեղմիչից դուրս յեկող կաբելի մի ծայրը միացվում է խտացուցիչին (կոնդենսատորին) իսկ խտացուցիչից դեպի մշտական գիծը: Հողի սեղ-



միջը (հեռախոսի) անմիջապես միացվում է հողանցումին: Հեռախոսային ապարատները մեծ մասը ունեն ադապտիվ գծային կոնդենսատոր հատուկ սեղմիչով, վորոնց հարկավոր է բերել միացնել մշտական գծին:

Նախքան կոնդենսատորին միացնելը, պետք է համոզվել, վոր նա սարքին է. այսինքն՝ կոնդենսատորը իր միջով չպետք է անցկացնի մշտական հոսը (տոկը), այլ կերպ կարելի չե խանգարել հեռադրի աշխատանքը:

### 23. ԳԱԶԵՐ ՅԵՎ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

83. Գազերը ներգործում են վաչ միայն մարդու որգանիզմի վրա, այլև կապի միջոցների վրա: Այդ ներգործումը գլխավորապես լինում է՝ ա) գործիքների պղնձե մասերի վրա, բ) բարակ, նուրբ պողպատե մասերի վրա, գ) կոնտակտների վրա, յերբ փառ է թողնում նրա վրա, վորը նվազեցնում է կոնտակտների փոխանցելիությունը (проводимость), դ) տարրերի ելեքաշարժական ուժի վրա, ե) կարելային հաղորդիչների մեկուսացման վրա:

Այսպիսով գազերի ազդեցությունից կապի միջոցները գործողությունները վնասվում են և մի քանի դեպքերում ել չարքից դուրս են հանվում:

84. Աշխատանքի անցնելիս կամ լսելով գազային տալանտի ազդանշանը, յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է՝ ա) արագությունը հաշնի դիտակը, բ) ծածկի գործիքները ծածկոցով, գրատով (չինելով), քաթանով, վրանի կտորով, դ) չպաշտպանված ձեռքերով չվերցնել կապի այն միջոցները, վորոնց վրա գազն արդեն ներգործել է:

85. Գազերի վնասակար ազդեցությունից զգու-

շանալու համար անհրաժեշտ է միշտ իր հետ ունենալ՝ ա) լավ հատուկ հակազաղ, բ) պաշտպանական ձեռնոցներ, գ) կտավհատի ձեթ, սողա և այլ միջոցներ, վորոնք անվնաս են դարձնում գազերի գործողությունը:

86. Գազային հարձակումից հետո, բոլոր գործիքները պետք է անմիջապես մտքրել գազերի նստվածքից, այն միջոցներով, վորոնք բացատրված են հատուկ հրահանգների մեջ:

### 24. ԼՈՒՍ-ՆՇԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

87. Այն դեպքերում, յերբ մարտական պայմանների և վայրի հատկությունների համեմատ դժվար կլինի կիրառել լարային կապ, պետք է կիրառել լուսային հեռադիր (ոպտիկական նշանաբարություն), վորը բարենպաստ արդյունքներ է տալիս մարտական պարագայի հետեվյալ դեպքերում. ա) բերդային պատերազմում և յերբ միասին են գործում ցամաքային զորքերն ու գետերի նավատումբը, հետեվակի լիմբակներն ու տանկերը, վորոնք գործում են հակառակորդի թիկունքում. բ) այն վայրերում, վորտեղ դժվար է կաբելային և ձողերով գիծ անցկացնել. գ) լեռնային և տափաստանային ուայոններում. դ) այն դեպքերում, յեբ սահանջվում է կապ տալ կարճ ժամանակվա համար պատվերներն ու տեղեկությունները փոխանցելու համար (յերթային շարժումների ժամանակ):

88. Լուսային հեռագրի (ոպտիկական նշանաբարություն) միջոցները, վոր գործադրում են կապի գորքերը, հետեյալներն են՝ ա) մեծ և փոքր գրոշակներ,



բ) քաթաններ, ճողեր, ժապավեններ, դ) Մանժեն  
լամպը, զ) արևադիր, ե) աղբանջանային հետեակայի  
լամպը «Լյուկաս», զ) աղբանջանային փամփուշտներ  
հրթիռներ, բենգալյան վրակ և աղբանջանային ծուխ

89. Ագղանջանային դրոշակները գլխավորապես  
կարճ պայմանական նշաններ և փոքր տեղեկություններ  
ու պատվերներ փոխանցելու համար են։ Նրանք լինում  
են մեծ և փոքր, իսկ ըստ տիպի լինում են կոշտ և փա-  
փուկ։ Ամեն մի (փափուկ) աղբանջանային դրոշակ քա-  
ռակուսի քաթանի կտոր է 60×60 սմ. Հասի։ Այդ քաթա-  
նի կտորն ամրացրած է 75 սմ. յերկարության փայտի  
կոթին։ Դրոշակների գույները լինում են սպիտակ,  
մուգ-կապույտ, կարմիր, դեղին և նարնջագույն։ Գոր-  
ծողության հեռավորությունը — 1½-ի կիլոմետր։

90. Արեվագիրը արևի լույսի ոգնությամբ նշա-  
նարարության համար է։ Նա կազմված է. ա) աշխատան-  
քի հայելուց բանալիով, բ) ծնկաձև նշանոցից, գ) ողնա-  
կան հայելուց և դ) տուփից նշանոցի և ողնական հա-  
յելու համար։

Արևագրի գործողության հեռավորությունն է 18-25  
կիլոմետր։

91. Մանժենի լամպը լույսի ոգնությամբ զանա-  
զան տեսակ տեղեկություններ փոխանցելու համար և  
այդ լույսն ստացվում է նավթի լամպից կամ ացետիլենի  
ձրագից։ Այս լամպի գործողության հեռավորությունն  
է մինչև 20 կիլոմետր. ցերեկը նա չի աշխատում։

Լամպը կազմված է. ա) քառանկյունի տուփից, վերն  
ունի ներքևում դիտակ (подзорная труба) և մա-  
շիպուլյատոր-տուփ, բ) դեներատորից ացետիլեն ստա-  
նդի համար և գ) յեռոտանուց։

92. Ագղանջանային հետեկակային լամպը «Լյու-  
կաս» զանազան տեսակ տեղեկություններ փոխա-  
ցելու համար է. հետեակային զնդի, գումարտակի,  
վաշտի ռայոններում։ Լամպի գործողության հեռավո-  
րությունն է 4½ կիլոմետր — գիշերը, մինչև 1-2½  
կիլոմետր — ցերեկը։

Լամպը կազմված է. ա) պատյանից, բ) լամպից յեր-  
կատամանի վառով, սնող կարելով և փողակով, վորը  
ծառայում է լամպը նշանադրելու համար, գ) լուսամփո-  
փից, յերեք գունավոր սկավառակներից և պահունի  
մասերից։

93. Ագղանջանային կայարանին սպասարկելու ժա-  
մանակ յուրաքանչյուր կարմիր բանակային պարտա-  
վոր է հետևել, վոր. ա) լուսադղանջանային հայելիները  
սրբած լինեն փոշուց և իրենց մակերեսի վրա չունենան  
տամկություն, բ) ընդունող կայարանը պարզ ու վորոշ  
տեսանի աղբանջանները և գ) քողարկված լինի հակառա-  
կորդի կողմը։

94. Յուրաքանչյուր կայարանում որպահսություն  
են անում 2 մարդ, նրանցից, մեկը՝ կայարանի պետը  
(ավագ)։ Կայարանն աշխատելու ժամանակ յերկու նը-  
շանարանները կատարում են աշխատանքը, ընդվերում՝

ա) հանձնելու ժամանակ մեկը թեկադրում է և հե-  
տևում է ընդունող կայարանի աղբանջաններին — մյուսը  
հանձնում է.

բ) ընդունելու ժամանակ — մեկը ընդունում է և  
թեկադրում է, մյուսը դրանցում է։

95. Լուսագիրն ընդունելու և հանձնելու համար ան-  
հրաժեշտ է.



ա) կանչել կայարանին—բանալին սեղմել և բռնել լուսի յերկարատեղ ճառագայթ.

կանչի պատասխանը տրվում է նույն կերպ.

բ) առ նախադասութուն, «սլ. սլ.» տառերը տրվում ( . - - . - - . ) .

դ) հարեվան կայարանի համաձայնութունն առնալ: Համաձայնութունն տրվում է «սլ. դ.» տառերով ( . - - . - - . ) :

դ) Դրանից հետո սկսել փոխանցումը կամ ընդունումը.

ե) Յուրաքանչյուր ընդունած բառից հետո իմաստալ—հասկացել եմ — «տիրե» (—) .

դ) փոխանցելու ժամանակ յեթե սխալ է լինում կամ «չեմ հասկացել» ընդունելու ժամանակ—«ընդհատում» մի շարք կետեր ( . . . . . ) և փոխանցումը (հանձնումը) սկսել ճիշտ տված խոսքից .

ը) փոխանցումից կամ ընդունելուց հետո աղափնուհիներ «ով ընդունեց և հանձնեց» և աղա հանձնել լուսադիրը ըստ նշանակության:

## 25. ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՊԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԱՂԱՎՆԱՅԻՆ ՊՈՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

96. Փոստային աղափնիների կիրառումը կապի համար հնարավոր է և՛ հեռակալում և՛ հեծեղադրում: Աղափնիների միջոցով կապ հաստատելու հարկ է լինում այն ժամանակ, յերբ հեռախոսակալն ջոկատը (հեծեղադրումը) կտրվում է իր զորքերից մեծ հեռավորության վրա, կամ յերբ ջոկատը (զորամասը հարկադրված է լինում կտրվել իր զորքերից բավականին հեռավորության

վրա, կամ յերբ կապը կտրվել է դրանց հետ և հեռավոր վրա չեն վերականգնել կապը՝ կապի մյուս միջոցներով: Աղափնու թռիչքի արագութունն է՝ մինչև 50 կիլոմետր մի ժամում, հեռավորութունը մշտական աղափնուսից—500 կիլոմետր, շարժականից—30 կիլոմետր:

97. Մշտական կամ շարժական կայարանից աղափնիների ոգտագործելու համար առանձնացնում են աղափնային պոստեր, վորոնք կազմված են վորոշ թվով աղափնիներից հատուկ դամբյուղների մեջ:

Պոստերը լինում են՝

ա) անշարժ, վորոնք յերկար ժամանակ դանվում են մի տեղում (գնդի շտաբին կից և այլն) և

բ) շարժական, վորոնք տրվում են շարժվող զորամասերին:

Անշարժ պոստի դրուին է անցնում աղափնային պոստի պետը, վորը ծանոթ է պոստում աշխատող աղափնիներին ինամելու կանոնների հետ:

Շարժական պոստում աղափնիներին ոգտագործելու համար, աղափնիներով դամբյուղները կարելի չեն հանձնել զորամասի ամեն մի հրամատարի, վորը պետք է միայն իմանա թե ինչպես ամրացնել աղափնուն տեղեկագրերը և ինչպես բաց թողնել նրան:

Վորպես կանոն, պոստում աղափնիները մի սեռի պիտի լինեն և հավատար բաժանված աղափնակայանի պետերին:

98. Աղափնիներին շարժական պոստում պահելու համար, դործադրում են զանազան մեծության հատուկ դամբյուղներ՝ 10, 5 և 2 գույք աղափնիների համար: Յուրաքանչյուր պոստում բավականաչափ թվով պետք է լինեն ջրամաններ և կերակրամաններ:



Յուրաքանչյուր պոստ պետք է ունենա իր աղափնիներին թվի համեմատ հարկավոր պորտոգեպեշնիկներ դրոշակ աղափնադրի համար, մատիտ և կերի պաշար

99. Աղափնային պոստը տեղավորվում է հրամատարական կետին մոտիկ կամ այն պետին մոտիկ, վորը պետք է ողտադործի աղափնիներին:

Քողարկվելու համար պոստը տեղավորվում է ծածկված տեղում, ոգտվելով կառուցվածքներից, արկի դատարկ ձաղաքներից և այլն:

Ենթում յեղած ժամանակ պետք է հետեվել, վոր աղափնիները միջանցիկ ոգի հոսանքի մեջ չգտնվեն:

Գիշերը աղափնիներին պետք է պահպանել կատուներին, ժանդաքիսների (խարյուկ), առնետների և այլն հարձակումից:

100. Աղափնիները պոստում պետք է ամենաուշադիր խնամքն ու հսկողությունն ստանան:

Պոստի պետը պարտավոր է հետեվել, վոր կողմնակի մարդիկ աղափնիներին չկաշեն և չանհանդուստացեն նրանց:

Փոստային աղափնիներով դամբյուղները պետք է մաքրել ամեն ոք և դամբյուղների հատակներին փոել բարակ շերտ չոր դետի ակաղ, հարդ, խոտ և այլն:

Վորպես կեր աղափնիներին առլիս են վիկի, օխսուի, ցորենի, կորեկի խառնուրդ: Աղափնիները պոստում պետք է միշտ կուշտ չլինեն և կերակրվեն ոքը մեկ անդամ յերեկոյան դեմ: Ամեն մի աղափնու համար կերամ կրամանի մեջ են լցնում  $\frac{1}{4}$  բաժակ կեր: Զուր մշտապես պետք է լինի:

101. Աղափնուն տեղեկագրի հետ բաց են թողնում հետևյալ ձևով.

Աղափնադիրը դրում են բլանկի վրա  $6 \times 14$  սմ. չափի, ծալում են մեկ անգամ, վորքան հնարավոր է բարակ և փաթաթում են գլանափի ձևով: Դրանից հետո աղափնադիրը կոխում են պորտոգեպեշնիկի ներսի խոյովակի մեջ և պորտոգեպեշնիկն ամրացնում են:

Պորտոգեպեշնիկը աղափնուն ամրացնելու համար, ձախ ձեռքով աղափնուն հանում են դամբյուղից, բռնելով աղափնուն այնպես, վոր աղափնու վրտն ընկնի ձեռքի ցուցամատի և միջամատի միջև, մյուս մատներով սեղմում են աղափնուն թևիկերի վրա պոչին մոտիկ: Աջ ձեռքով հագցնում են պորտոգեպեշնիկը վրտքին, ծալելով սեղմակները այնպես, վոր ամուր կերպով ընդգրկի վրտքը և հետո բաց են թողնում աղափնուն:

102. Անշարժ պոստերում աղափնիներին առանց փոխելու կարելի յե պահել մեկ ոք, իսկ ծայրահեղ դեպքում, լավ տեղավորված ժամանակ, կարելի յե պահել մինչև 3 ոք: Ծարժական պոստերում կարելի յե պահել վուշ ավելի, քան 5-6 ժամ: Աղափնիներին փոխը առաջավոր դորամասերում, վորտեղ մարտ կա, կատարվում է դիշերը, մնացած դեպքերում ցերեկը:

## 26. ԿԵՆԴԱՆԻ ՅԵՎ ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՍԱՎԱՌԱՆ, ԱՎՏՈՄՈԲԻԼ, ՄՈՏՈՑԻԿ,  
(ՀԵԾԱՆԻՎ, ԶԻԱՎՈՐ ՅԵՎ ՎՈՏԱՎՈՐ  
ԼՐԱՏԱՐՆԵՐ)

103. Վերևում հիշատակված կապի բոլոր միջոցների հետ միասին, մարտական պարագայում լայնորեն Դործողություն է կենդանի և միջամիկակամ կապ:



կենդանի կապը գործադրվում է վերին վար — րա նակի շտաբից մինչև կորպուսի շտաբը — սավառնակով ավտոմոբիլով, մոտոցիկլով: Կորպուսի շտաբից մինչև դիվիզիայի շտաբը — սավառնակով, ավտոմոբիլով, մոտոցիկլով, հեծանիվով, ձիավոր լրատարներով: Դիվիզիայի շտաբից մինչև գնդի շտաբը — սավառնակով, ավտոմոբիլով, մոտոցիկլով, հեծանիվով, ձիավոր և վոտավոր տավոր լրատարներով: Գնդի շտաբից մինչև գումարտակի հրամատարը — հեծանիվով, ձիավոր և վոտավոր լրատարներով: Գումարտակի հրամատարից մինչև վաշտի հրամատարը — ձիավոր և վոտավոր լրատարներով: Վաշտի հրամատարից մինչև դասակի հրամատարը — վոտավոր լրատարներով: և դասակի հրամատարից մինչև ջոկի հրամատարը — վոտավոր լրատարներով:

104. Յերթական շարժման ժամանակ, յերթ դժվար և հեռադրա-հեռախոսային կապ հաստատել զորամասերի միջև, զլիափորապես կապի համար գործադրում են՝ ավտոմոբիլ, մոտոցիկլ, ձիավոր և վոտավոր լրատարներ:

Ավտոմոբիլը, մոտոցիկլը և հեծանիվը պահանջում են լավ ճանապարհներ:

Շարժման միջին արագությունն է՝ սավառնակի համար — 125 կիլոմետր մի ժամում. ավտոմոբիլի համար՝ 30-50 կիլոմետր, մոտոցիկլի համար — 30-40 կիլոմետր. ձիավոր լրատարի համար — 10-12 կիլոմետր և վոտավոր լրատարի համար 1 կիլոմետր 5-8 րոպեյում, առանց արգելքների, իսկ արգելքներով — 1 կիլոմետրը 8-10 րոպեյում: Հեծանիվը 10 կիլոմետրը մի ժամում:

## 27. ՀԵԾԱՆԻՎ ՆԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԵՆԱՄՔՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

105. Նստելը: Նստելով հեծանիվի վրա պետք է դուրսը պահել ուղիղ և նայել ուղիղ իր առաջ, աչքատեղով պարզ տեսնել առջևում ճանապարհը մոտ 10 մետրի վրա: Հետագայում աստիճանաբար պետք է սովորել նայել դեպի կողմերը և յետ նայել: Չպետք է նայել անխիմների տակ, վորովհետև ժամանակին կարելի չե չնկատել արգելքը: Ծնչել անպայման թիվ, վորքան հարկավոր է խորը և ավելի սակավ: Մարմինը պահել ուղիղ ընչ թեքելով դեպի առաջ: Վոտքերով աշխատել սահուն, կանոնավոր առանց հրումների: Արմունիները շտարածել կողմերը: Ուսերը բաց անել, կուրծքն ուղղել: Վոտի թաթերն ու ծնկները չբացել: Վոտնատեղին (պիդալ) սեղմել թաթի լայն մասով: Վոտքով աշխատելու ժամանակ պետք է վոտի թաթով սեղել վոտնատեղին այն ժամանակ, յերթ վոտնատեղը հենց նոր է իր վերևի դրությունն անցել, իսկ հետո, իսկույն թուլացնել վոտքը: Ներքևի դրության ժամանակ վոտնատեղը հարկավոր է, ընդգրկելով վոտքի թաթով ուժով առնել ներքևի դրության, և ապա նորից թուլացնել վոտքը:

106. Հեծնելու կանոնները.

1. Քաղաքում մանգալ միշտ դանդաղ, բացի դիշեր ժամանակ մանգալուց:

2. Գնալ փողոցի աջ կողմից, բայց վաղ մայթին մոտիկ:

3. Փողոցը խոտորնակի անցնելիս, դանդաղացնել ընթացքը, իսկ յերթ մեծ շարժում է փողոցում, պետք է իջնել և հեծանիվը հրեղով տանել:



4. ճախ կողմից առաջից պնացությունքի և ձեռով կամ կառքով պնացողներին կողքից անցնել վոչ չառ նրանց մոտից, գլուխացնել ժամանակին զանգ տալով:

5. խճուղիով (չոսսե) գնալիս գնալ կողքից. սակայն ուղադրությամբ հետևել ճանապարհին, վորովհետև և կանաչ խոտերի մեջ կարող են քարեր լինել և կոտրել վոտնատեղը:

6. դեանողիներով գնալիս նույպես գնալ կողքից: կարելի չէ գնալ վոտավորի արահետներով:

7. ցեխ կամ սկիւն (սայթաքուն) ճանապարհով գնալիս պինդ պետք է սեղմել ղեկի բռնատեղին, մի քիչ պետք է առաջ հենվել նրա վրա (ղեկի վրա) և դանդաղեցնել արագությունը:

8. վոչ խոր խրամները (կանավկաները) անցնելիս մի քիչ բարձրանալ թամբից վոտնատեղերի վրա ապելի հենվելով:

9. դառնվալ խրամներն անցնել շեղակի (խրամի լանջով):

10. տրամվայի և յերկաթուղու ուղիներն անցնել ուղիղ անկյունով:

11. ճանապարհի վրա յեղած քարերը, փայտերը, լարերը չըջանցել և այնպես գնալ:

12. սարը բարձրանալ վոչ թե ուղղակի, այլ կեռամանակ (զիդգադներով): Ավելի լավ է իջնել և հեծանիվը ձեռքով տանել:

Սարը բարձրանալիս խրանը թեքել դեպի առաջ ապելի ուժեղ սեղմել վոտնատեղերին:

13. Սարից իջնելու ժամանակ արգելակել ձեռքի ալուրի արգելակներով: Արգելակին պետք է սեղմել առա-

տիճանաբար, այլ կերպ կարելի չէ թամբի վրայից վալթուչել: Վոտքի արգելակն արգելակելիս վոտնատեղերին պետք է սեղմել այն ժամանակ, յերբ նրանք դեպի վեր են գնում:

14. կանգառումների ժամանակ չոգ յեղանակին հեծանիվը պետք է կանգնեցնել չվաքում և դողերը (չիները) թրջել ջրով:

15. գիշերելու համար այնպիսի տեղ պետք է ընտրել, վորտեղ հնարավոր լինի տեղավորվել հեծանիվի հետ միասին: Հեծանիվը փակել բանալիով և կանգնեցնել դիսի կողմում:

107. Խնամքն ու պահպանումը. Հեծանիվը միշտ պատրաստ պետք է լինի վորակե տեղ գնալու համար: Հեծանիվին հսկելն ու այն սարքին դրության մեջ պահելը լրատարհեծանվորդի գլխավոր պարտականու թյունն է: Վերադառնալիս, հեծանվորդը իսկույն ևեթ պետք է զննի ամբողջ հեծանիվը, իմանալու համար արդյոք բոլոր մանեկներն (գայկա) ու գնդերիթները (բոլտ) իրենց տեղերում են թե վոչ, լա՞վ են հագցրված, չըջանակի վրա և մյուս մասերի վրա չկա՞ն արդյոք ձեղքեր: Այդ հեշտությամբ կարելի չէ նկատել հեծանիվը փոշուց և ցեխից մաքրելու ժամանակ: Դողերը (չիները) պետք է խնամքով գննել և համոզվել, վոր նրանց մեջ սուր իրեր, չոփեր, քարեր չեն խրված վոր նրանց մեջ սուր իրեր, չոփեր, քարեր չեն խրված (մեխեր, լարեր, թիթեղի կտորներ և այլն): Համոզվել լա՞վ են արդյոք նրանք ողով լցված, յեթե հարկավոր է, ող թողնել նրանց մեջ:

Արտաքին մաքրումը պետք է կատարել ամեն անգամ մի տեղ գնալ դալուց հետո: Չոր յերանակին սրբել



չոր լաթով: Խոնավ յեղանակին կամ ցեր ձանադարհից հետո նախ սրբել թաց չորով և հետո նավթով թեթև թրջած չորի կտորով նեղ տեղերը մաքրելու համար փայտի փոքրիկ ձողիկներին կարելի յե փաթաթել լաթը և դրանով մաքրել: Յուրաքանչյուր ձանադարհորդությունից հետո չլթան անպայման պետք է սրբել նախ չոր և ապա նավթի լաթով:

Զմեռը հեծանիվը չպետք է միանգամից սառնամանիքից տաք սենյակ տանել. այլ հարկավոր է սառը սենյակում թողնել քիչ քրտնի: Տաք սենյակում պետք է սրբել չոր լաթով: Մաքրելու ժամանակ զուշությամբ պետք է մաքրել, վորպեսզի դողերի (չիների) վրա չկաթի վոչ նավթ, վոչ բենզին կամ յուղ, վորովհետև դրանք ուղիներ փչացնում են:

Գնդակիկների սեռնակները ( П О Д Ш И П Н И К И ) խնամքով մաքրելու համար հեծանիվը պետք է կախել կամ շուռ տալ ափսեա վոր անիվները ազատ պտտվեն, հետո յուղելու անցքը լցնել բենզին, վորից հետո պետք է պտույտ տալ անիվը կամ շարժաձողերի ( шатуны ) առանցքը: Յերբոր կսկսի մաքուր բենզին թափվել, լցնել յուղ և հետո նորից պտույտ տալ մի առ ժամանակ: Անիվների և շարժաձողերի առանցքները պետք է յուղել շարաթը մեկ անգամ: Վոտնատեղերի առանցքները պետք է յուղել յերբ կարիք կլինի:

Բացի մաքրելուց, ամեն որ անիվները պետք է զննել և կանոնավորել ու յուղել: Զննելու ժամանակ պետք է համոզվել, վոր չի ծռվել արդյոք անիվի դոտին (որոդ) («չի խփում»): Յեթի դոտին «խփում է», այն

ժամանակ նշանակում է, վոր ծռվել է («ութած») և յերկանիվն ուղարկվում է արհեստանոց:

## 28. ԼՐԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՐԱՐՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

108. Բանավոր կարգադրություններն ու ծրարները հանձնելը լրատարի համար նույնն է ինչ վոր է պոստի հանձնելը ժամապահի համար: Բանավոր կարգադրություններն ու ծրարները պետք է հանձնել ինչ գնով ուղում է լինի ճիշտ ժամանակին:

ձանադարհ ընկնելուց առաջ լրատարը ճշտորեն պետք է իմանա այն ձանադարհը, վորով նա պիտի ընթանա և վորտեղ դառնվում է այն անձնավորությունը, վորին պետք է հանձնել տեղեկագիրը:

109. Տեղեկությունները կարող են լինել բանավոր և գրավոր: Բանավոր պատվերն ստանալիս լրատարը պարտավոր է կրկնել և կատարելուց հետո, յերկրորդ անգամ կրկնել:

Յեթի գրավոր հաղորդադրությունը բաց է, կնքված չի, լրատարը պետք է կարդալ տա իր ձանադարհին և, լրատարը պետք է կարդալ տա իր ձանադարհին հանդիպող հրամատարական կազմին, վորն ընթանում է իր դորամասի հետ և պահանջի նրանցից ստորագրություն:

Լրատարը տեղեկագիրն ափսեա պետք է պահի, վոր չլորցնի և անձրեից չթրջի ձանադարհին:

Հակառակորդի հանկարծակի հանդիպելու ժամանակ, յեթե հարկավոր է, լրատարը պետք է իմանա տեղեկագրի բովանդակությունը և վոչնչացնի ծրարը,



110. Տեղ հասնելուց հետո, վորտեղ նշանակված է հանձնել տեղեկագիրը, լրատարը վորոնում գտնում է հասցեատեր անձնավորությանը և հանձնում է նրան ծրարը: Ծրարն հանձնելուց հետո, բաց ծրարը յետ և ստանում վրան ստորագրած ստացման մասին կամ առանձին ստորագրություն է վերցնում առանձին թղթի վրա գրած: Ծրարը հանձնելիս, լրատարը ղեկուցում է ճանապարհին բոլոր իր նկատած բաների մասին և այդ օգետի թույլատվությամբ (վորին հանձնել է ծրարը) վերադառնում և այն գործասքը, վորտեղից դուրս եր յեկել, (վորտեղից ուղարկված էր): Տեղ հասնելով նա այստեղ նույնպես ղեկուցում է ճանապարհին բոլոր իր նկատած բաների մասին:

29. ԱՎԻՈ-ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՊՈՍՏ.  
ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԾԱՌԱ-  
ՅՈՒԹՅՈՒՆԸ

111. Ողայիմ կապի (աղիւ-աղղ-ան չտեա յիւն) պոս-  
տերը նշանակովու՝ են՝

ա) առաջափոր զորամասերի միջև կողմի համար, չտաքների, հրամատարութեան և վերջիններէս միջև կապ սլահելու համար ստվառնակներին միջոցով:

բ) Զորամասերի ու շտաբների և ողում գտնվող սավառնակների միջև կապի համար:

դ) Ողիւն ղիտելու ծառայութեան համար՝ ողայիւն  
սլաշտպանութեան նպատակով:

112. Ողային կապի պոստը կազմված է 5 մարդուց .  
1 պոստի պետ և 4 նշանաբարներ, վորոնցից մեկը  
սպախական :

Պոստի մասնադիրտական գույքը կրում, տեղափոխում են յերկանիլով, այդ գույքը կադմում են՝ ա) յերկու ճանաչողական քաթան. բ) յերկու կոմպլեկտ ազդանշանային քաթաններ. գ) կողմնացույց. դ) ժամացույցներ. ե) յերկդիրտակ. զ) դրելու գրքույկ. հ) դիրտողությունների ժուրնալ. ը) սավառնակների ուղղանկարների ալբոմ. թ) սավառնակների ճանաչողական նշանների աղյուսակներ. ժ) ազդանշանների աղյուսակներ և ժա) քարտեզներ:

Գիշերային աշխատանքի համար պետք է ունենալ  
գոնավոր կրակների պաշար և լապտեր պոստի կարի-  
ների համար :

113. Ողային կապի պատի տեղը պետք է ընտրել ըստ հնարավորութեան շտաբին կամ հրամատարական կետին մոտիկ: Աղդանշանային հրապարակը պետք է ծածկված լինի հակառակորդի դիտողութեանից և պետք է ապահովվի՝

ա) Որքան լավ դիտելու հնարավորությունը. բ) դրոշակները (վիճակները) արագ դտնելը, վորոնք ցած են դցվում սավառնակներուց, և «կատվիկով» («КОМБА») սավառնակին տեղեկություններ հանձնելու հնարավորությունը. գ) հրապարակի և սավառնակին տրվող բոլոր ազդանշանների լավ տեսանելիությունը:

Պոստը չտարբի (հրամատարական կետի) հետ կա-



պելու համար, պոստին տրվում է ձիավոր կամ հեծան-  
վորդ լրատար կամ հեռախոս և անցկացվում:

114. Սավառնակի և յերկրի միջև կապ և հաստատ-  
վում կանչով՝ ինչպես սավառնակից, այնպես ել յեր-  
կրից:

Առաջին դեպքում՝ սավառնակը նշանաբանային  
(պարունիյ) ազդանշան է տալիս—«վո՞րտեղ եք: Յետ  
ձեր սավառնակն եմ»: Պոստը նետում է իր նշանաբանը:

Յերկրադղ դեպքում՝ պոստը նետում է իր նշանա-  
բանը և սավառնակից ստանում է նշանաբանային ա-  
բը (ոտզիվ):

Այդպիսով ստուգելով սավառնակին, պոստը փոխում  
է իր ճանաչողական քաթաները, վորից հետո սկսվում  
է աշխատանքը:

Հրամատարից ստացած ավիագիրը նախորդ սա-  
վառնակին ծածկադրվում է կողի (չիֆրերի կրճա-  
տադրի) համաձայն և հանձնվում է ազդանշանային քա-  
թանով, վորի միջոցով կարելի չէ համակցել (к о м -  
б и н и р о в а л ь) ղանադան տեսակ կերպարանների դա-  
սավորությունը: Յուրաքանչյուր դասավորված ազ-  
դանշանից (կերպարանից) հետո, սավառնակը իմաց է  
տալիս՝ «հասկացա», վորից հետո միայն կարելի չէ  
դասավորել ազդանշանը: Յեթե սավառնակը չի հաս-  
կանում ազդանշանը, իմաց է տալիս «չհասկացա, կրկը-  
նեցեք» և ազդանշանը կրկնում են:

Սավառնակից վայր ձգած դրոշակը (վիմպել) տե-  
ղեկադրի հետ միասին անմիջապես վերցնում են և տե-  
ղեկադրի բովանդակությունը հայտնում շտաբին կամ

Հրամատարին հեռախոսով, իսկ տեղեկագիրն ու  
դարկվում է լրատարի ձեռքով:

«Յեթե վայր ձգած տեղեկագրի հետ դրոշակը  
կորչում է, ազդանշան է տրվում՝ «չհասկացա» և  
սպասում են յերկրորդ դրոշակի վայր ձգելուն:

Աշխատանքի ժամանակ հակառակորդի սավառնակ  
յիրևալու դեպքում, պոստը դադարեցնում է հանձը-  
նումը և դրա մասին ազդանշան է տալիս մեր սավառ-  
նակին և քողարկելու միջոցներ է ձեռք առնում:

Պոստը կարելի չէ հանել միայն այն ժամանակ  
յերբ պատվեր է ստացվում կապի իր պետից կամ այն  
Հրամատարից, վորին սպասարկում է պոստը:

### 30. ՌԱԴԻՈԿԱՊ

115. Լարային միջոցների հետ հավասար կապի  
համար գործադրվում է ուղիս-հեռագիրը (ռադիո-  
հեռախոսը):

116. Մի քանի դեպքերում ռադիոհեռագիրը (ռա-  
դիո-հեռախոսը) անփոխարինելի չէ, իսկ յերբեմն ել  
կապի միակ միջոց, այն է՝ ա) հակառակորդի կողմից  
իրարից բաժանած մեր զորամասերի միջով կապի հա-  
մար: Բ) այնպիսի զորքերի միջև կապ պահելու հա-  
մար, վորոնք բաժանված են իրարից անանցանելի տա-  
րածություններով (ծովերով, անանցանելի լեռներով,  
ձահիճներով և այլն), Գ) մեր հեծյալ զորամասերի  
հետ կապ պահելու համար, վորոնք ունի են զնացել  
կամ հարձակում են դործել դեպի հակառակորդը Թի-  
կոնքում, Դ) սավառնակների իրար միջով և սավառ-







120. ՌԱԴԻՈ-ՀԵՌԱԳՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

1) Հակառակորդը կարող է բռնել ռադիո-գրերը, վոր տրվում են մեր ռադիո-կայարաններից: Այդ պատճառով բոլոր ռադիոգրերը պետք է արվեն ծածկագրերով: Ծածկագրելու և ծածկագրերը կարդալու համար չստ ժամանակ է կորչում, դրա համար ռադիո-հաղորդումը դանդաղում է:

2) Հակառակորդը իր պեղենգատորական կայարաններով կարող է վորոշել մեր ռադիո-կայարանների առաջը:

3) Հակառակորդը կարող է խանգարել մեր ռադիո-կայարանների աշխատանքը, իր ռադիո-կայարանները դնելով այն ալիքների վրա, վորոնցով մեր ռադիո-կայարաններն են աշխատում և ընդհատել մեր աշխատանքը:

121. Ռադիո-կայարանները պետք է քողարկել հակառակորդի ողային և յերկրային դիտողությունից. այդ պատճառով նրանց պետք է տեղավորել ծածկված տեղ: Յերկանիվները ծածկել ճյուղերով կամ քողարկ-գորգերով, քողարկ-ցանցերով. շրջապատող վայրի դույնին համապատասխան: Կայմերը քողարկել տեղական ստարկաներին համապատասխան և վորքան հնարավոր է կառուցել ծառերի տակ (թիկերում), չինությունների մոտ և այլն: Ռադիո-կայարանի մոտ չպետք է տեղավորել դումակը (մասնադիտական, տնտեսական), ձիերին և խմբերին, վորոնք սպասարկում են կայարանին, նրանց պետք է տեղավորել ռադիո-կայարանից քիչ հեռու, հակառակորդի ողային դիտողությունից ծածկված տեղում:

122. Հակառակորդը կարող է ռադիո-հետապնդում:

թյուն կառարել, այդ պատճառով անհրաժեշտ է մեր ռադիո-կայարանների աշխատանքը քողարկել: Աշխատանքի ժամանակ խիստ կարգապահություն պետք է լինի: Կտրականապես արգելվում են ամեն տեսակ վոչ-ծածկագրեր խոսակցություններն ու վոչ-ծածկագրեր հեռադրերի հանձնումը ռադիոյով, բացի ադիոագիտի և ինֆորմացիոն ռադիո-գրերից քաղաթիւնների հատուկ կարգադրությամբ: Շրջաբերականներ հանձնելու արգելվում է թիկել կայարանների անունները, վորպեսզի հակառակորդը չիմանա թե ճակատի տվյալ շրջանում բանի ռադիո-կայարաններ են գտնվում:

123. Կապի միջոցներով ռադիոքողարկումը լինում է ռադիո-մանկյունի կատարելով, կեղծ ռադիո կայարաններ զնելով, կեղծ կարգադրություններ և հրամաններ հանձնելով— կանչելով զսյություն չունեցող կայարաններին:

124. ՌԱԴԻՈ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ՅԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Ըստ տիպի և նշանակման ռադիո-կայարանները լինում են՝

ա) Մշտական հզոր ռադիո-կայարաններ, վորոնք կառուցվում են ռազմական ստրատեգիական կետերում՝ այդ կետերի միջև և այդ կետերի ու կենտրոնի միջև կապ պահելու համար:

բ) Մշտական կիսահզոր ռադիո-կայարաններ, վորոնք սպասարկում են խոշոր շտաբներին, սրանց իրար միջև և սրանց ու ստրատեգիական կետերի միջև կապ պահելու համար, ստորին միավորությունների շտաբների ռադիո-կայարանների հետ կապ պահելու համար:



և ինֆորմացիոն տեղեկություններ հաղորդելու համար, գոյնէթյուն ունեցող կանոնները համաձայն:

գ) Շարժական կիսահարս աղիւկայարաններ—վազողներին, ավտոմոբիլային և նավային, վորոնք տրվում են ճակատների շտաբներին և նշանակվում են «բ» կետում ցույց տված նպատակների համար և ուժոված լինելով նշանավոր չափով շարժունակությամբ, նույնպես և բացվելու ու հավաքվելու արագությամբ, նրանք հնարավորություն են տալիս վերականգնողությունը շտաբի նոր տեղը դառնալ հետո:

դ) Ավտոմոբիլային, ծանր տիպի ռադիո-կայարաններ, վորոնք նշանակվում են նույն նպատակների համար, վորոնք ցույց են տրված «գ» կետում, սակայն ուժոված են գործողության ավելի խորը հեռավորությամբ:

յ) Ավտոմոբիլային, նորմալ տիպի ռադիո-կայարաններ, վորոնք նշանակվում են բանակների շտաբների ու կորպուսների միջև կապ պահելու համար, յերբ կան պինդ լավ ճանապարհներ:

զ) Դաշտային, նորմալ տիպի ռադիո-կայարաններ, վորոնք տեղափոխվում են յերկանիվների վրա— նշանակվում են բանակների շտաբներին ու կորպուսներին սպասարկելու համար: Պետքսկան ևն բոլոր ճանապարհների համար, բացի լեռնային ճանապարհներից:

է) Հեծելազորային ռադիոկայարանները, վորոնք նշանակվում են հեծյալ զորամասերի շտաբներին սպասարկելու համար, — հեծյալ գլխավորների և ավելի բարձր շտաբների համար, — հարմարեցված են յերկանիվների վրա: Հեծյալ զնդերի և ցածր հեծյալ զորամաս

ների համար տեղափոխում են գրաստներով կամ ծրարներով ձևավորների վրա:

ը) Դաշտային քեքի ռադիո-կայարաններ, վորոնք նշանակվում են գլխավորների շտաբներին սպասարկելու համար:

թ) Գրաստային ռադիո-կայարաններ— նշանակվում են զորամասերի շտաբներին սպասարկելու համար լեռնային, անտառային և ճահճային տեղերում:

ժ) Զետով տեղափոխելի ռադիո-կայարաններ— նշանակվում են գլխավոր շտաբից ցածր շտաբներին սպասարկելու համար և հրետանիում: Յերկարատե որսաղնացիների դեպքում, ձեռքով տեղափոխելիք ռադիո-կայարանները տեղափոխվում են յերկանիվների վրա:

ժա) Ավիացիոն ռադիո-կայարաններ, — նշանակվում են հրետանու հրամարտիչներ ճշտելու կամ սովորականներից տեղեկություններ հանձնելու համար հետախուզության ժամանակ և այլն:

ժբ) Պելեմգատորակա ռադիոկայարաններ— նշանակվում են հակառակորդի ռադիո-կայարանների տեղը վորոշելու համար:

ժգ) Ընդունող, ինֆորմացիոն ռադիո-կայարաններ— նշանակվում են մամուլի ու ինֆորմացիայի ընդունելու համար ռադիո-կայարաններից:

ժդ) Ընդունող-կոմտրոլ ռադիո-կայարաններ— նշանակվում են ռադիո-կայարանների աշխատանքին հսկելու համար, հսկում են ռադիո-հեռագրական թղթակցության ու հրահանգների կանոնները նրանց կողմից կատարելուն:



1) Ռադիոկապի միջոցները նպատակահարմար ձևով ոգտադրոճելու համար, յերբ ռադիո-կայարանի վրա յե դրված այս կամ այն խնդիրը, պետք է նկատի ունենալ ռադիո-կայարանների դործողության հեռավորությունը, վայրի ռելյեֆը, այդ վայրի բնույթը, տարվա ժամանակը և դիշեր ե թե ցերեկ:

2) Ռադիո-կայարանների դործողության հեռավորությունը տառանվում է հետևյալ սահմաններում՝ ա) հզոր ռադիո-կայարանների — 1000 և ավելի կիլոմետր, բ) կիսահզորների — 500-100 կիլոմետր, գ) ավտոմոբիլայինների, ծանր տիպի ռադիո-կայարանների — 250-300 կիլմ. դ) ավտոմոբիլայինների, նորմալ տիպի ռադիո-կայարանների — 175-250 կիլմ., յե) դաշտայինների — 175-250 կիլմ. զ) թեթև դաշտայինների — 40-100 կիլմ. ե) հեծելազորայինների — 50-150 կիլմ. ը) գրաստայինների — 50 կիլմ. թ) ձեռքով տեղափոխելի — 5-50 կիլմ. ժ) ալիսցիոնների զանազան հզորության — 25-250 կիլմ.:

Ծանոթութուն. — Ռադիոկայարանների աշխատանքի համար լավագույն պայմաններն են՝ ձմեռ ժամանակ, դիշերը, ջրային կամ հարթավայր տեղ փոխադարձաբար աշխատող ռադիոկայարանների միջև. անբարենպաստ պայմաններն են՝ ամառ ժամանակ, ցերեկը, արևը դուրս դալու և մայր մըտնելու ժամանակ, լեռնային և անտառային տեղանքում ռադիո-կայարանների միջև: Աննպաստ պայմաններում ռադիո-կայարանների դործողության հեռավորությունը կարող է նվազել նորմայից: ավելի ցածր:

Հեռախոսագրերն ընդունելու և փոխանցելու կամոնները.

Յուրաքանչյուր կայարան պարտավոր է փոխանցել հեռախոսագրերը անմիջապես նշանակված կայարանին:

Ընդունող կայարանի պատասխանն ստանալիս, փոխանցող կայարանն ասում է՝ «Այստեղ այսինչ կայարանն է (անվանում է իր կանչը) — հեռախոսագիր»։ Ընդունողը պատասխանում է «փոխանցե՛ք»։ Հեռախոսագիրը պետք է փոխանցել դուրիներով, հասցեն, տեղըստը և ստորագրությունը։ Հեռախոսագրի յուրաքանչյուր մասը փոխանցելուց սուղ հեռախոսիչն ասում է՝ «գլուխ այսինչ», կամ՝ «հասցեն այս է (ասում է)»։ Գլխին նշանակվում է փոխանցելու ուր ու ժամը, վորտեղից է, հեռախոսագիրը և ծառայության նշումները։ Հեռախոսագիրը պետք է փոխանցել խմբակներով՝ 3-6 բառ միանգամից, փոխանցելով ավարտված նախադասություններով։ Որինակ՝ «հետախուզական ջոկատի պետին» կամ «դոմարտակը բռնում է Ոչական գյուղը» և այլն։ Կետադրությունը փոխանցվում է վորպես բառ. որինակ՝ «վերջակետ, ստորակետ» և այլն։ Յեթե տեքստում ցույց են տրված ժամերն այսպես՝ «18<sup>25</sup>», հարկավոր է փոխանցել լրիվ կերպով՝ «ժամի տասնութից անց քսան հինգ րոպե»։ Հոլմեական թվանշանները փոխանցվում են ավելացնելով «հոլմեական» բառը։ Յեթե հոլմեական թվանշանից հետո հետևում է արաբական թիվ, այն ժամանակ փոխանցվում են ավելացնելով «արաբական» բառը։ Որինակ՝ յեթե հնարվոր է փոխանցել՝ III/S ա, պ, ապա



պետք է փոխանցել այսպես՝ «Հոռիմեղան յերեւելոտորակի գիծ, արարական ութ, «ա», կետ, «պ» կետ: Անհասկանալի բառերը պետք է փոխանցել տառերով. այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ փոխանցվող տառ փոխանցվում է լավ ծանոթ բառով. որինսկ՝ «կոմունիկացիա» սակավ հասկանալի բառը փոխանցել այսպես՝ «կարապետ, Ոգանես, Մկրտիչ, լւնան, Ներսես» և այլն: Ընդունողը գրի յե առնում միայն այդ բառերի սկզբի տառերը: Անհասկանալի թվերը փոխանցվում են հաշվելով, որինսկ, «67»-ը պետք է փոխանցել այսպես՝ «1, 2, 3, 4, 5, 6» և ապա՝ «1, 2, 3, 4, 5, 6, 7»: Ընդունողը գրի յե առնում միայն վերջին թվանշանները:

### ՀՆՌԱՆՈՍԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ընդունողը բարձրաձայն կրկնում է յուրաքանչյուր գրի առած բառը: Փոխանցողը տեղն ու տեղը ուղղում է սխալը: Այն, ինչպիսի ընդունողը չի հասկացել, խնդրում է կրկնել կամ փոխանցել տառերով: Հեռախոսազերը զբաղեցելուց հետո, ընդունողը մի անգամ կա կրկնում է իր ամբողջ ընդունածը: Դրանից հետո, ընդունած և հանձնած հեռախոսազերերի վրա գրում են ընդունելու կամ փոխանցելու ժամանակը, հեռախոսազերը և ընդունողի ու փոխանցողի ազդանունը:

Երջարեւակա՛ն փոխանցելու ժամանակ փոխանցող կայարանը կանչում է բոլոր կայարաններին հերթով և առաջարկում է պատրաստվել ընդունելու: Յերբոր վերջին կայարանը պատասխանում է, սկսվում է փոխանցումը:

Փոխանցելուց հետո, փոխանցող կայարանը նշա-

նակում է, ընդունող կայարաններից մեկին կրկնելու ընդունածը (յետադարձ ոտուգում), պերջինա կրկնում է, իսկ մնացած կայարանները լսում են և ստուգում իրենց ընդունածը:

Յերբոր կրկնությունը վերջանում է, փոխանցող կայարանը հարցնում է հերթով բոլոր կայարաններին ոտուգման հետեանքի մասին և նրանք պատասխանում են՝ «Յես, այսինչ կայարան— ճիշտ է»: Դրանից հետո գրում են փոխանցելու ժամանակը, հեռախոսազերի ազդանունները և հեռախոսազերը համարվում է փոխանցված:



<< Ազգային գրադարան



NL0217786

Հ Ա Շ Ի Վ

Հանգիստ 2

| Յերբ բանիւրներէ բխիւր տիւի Ե |                     |                      | Յերբ բանիւրներէ բխիւր կրճատ Ե                                    |                     |                     |                      |                                              |
|------------------------------|---------------------|----------------------|------------------------------------------------------------------|---------------------|---------------------|----------------------|----------------------------------------------|
| Ձախիւր ՄՄ                    | Վերականգնող<br>նիւր | Գծալիւր<br>բանիւրներ | Ձախիւր յեղած<br>պատկաններէ բանիւր                                | Ձախիւր յիւր<br>նիւր | Վերականգնող<br>նիւր | Գծալիւր<br>բանիւրներ | Ձախիւր յեղած<br>նիւր ու պատկաններէ<br>բանիւր |
| 1                            | 1                   | 2                    | 2 կաշիւ պատրաստի սեղանի                                          | 1                   | 1                   | 1                    | 1 պատրաստի սեղանի                            |
| 2                            | —                   | 6                    | 3 կիւղ կամ գալլիկ                                                | —                   | —                   | 2                    | 1 կիւղ կամ գալլիկ                            |
| 3                            | —                   | 3                    |                                                                  | —                   | —                   | 2                    | 1 կիւղ կամ գալլիկ                            |
| 4                            | —                   | 6                    | 2 փոխադրելի շրջանակներ<br>1 գծալիւր պատրաստի                     | —                   | —                   | 4                    | 1 փոխադրելի շրջանակ<br>1 գծալիւր պատրաստի    |
| 5                            | 1                   | 6                    | 1 գծալիւր պատրաստի<br>2 կաշիւ                                    | 1                   | 1                   | 3                    | 1 գծալիւր պատրաստի<br>1 կաշիւ                |
| 6                            | 1                   | 2                    | 1 գծալիւր պատրաստի 1 կաշիւ<br>1 կիւղ կամ գալլիկ, 1 ճեւ<br>սպիտակ | 6                   | 1                   | 1                    | 1 գծալիւր պատրաստի<br>1 կաշիւ, 1 ճեւսպիտակ   |



40.422

40.422 35 400.